Ապառաժ

Հիմնադրված է 1991 թվականին: 4 (525) մարտ 1-17, 2023թ.

ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀՅ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Արցախը առանցք դարձնելը՝ անշրջելի հրամայական

Մի քանի օրից լրանում է Արցախի շրջափակման 100 օրը իսկ մի քանի օր առաջ տոնեցինք ազատագրական պայքարի սկիզբն ազդարարող փետրվարյան զարթոնքի 35 ամյակը: Պայքարը շարունակվում է:

Այս օրերի եւ այս տարիների ընթացքում շատ անգամներ առիթ է եղել խորհելու, վերահիմաստավորելու համար պայքարի նպատակն ու ցանկալի վերջնաարդյունքը: Հատկապես դժվարին պահերին, երբ թվում է, թե հավաքական տոկունությունը տեղիք է տալիս, հարկ է մեկ անգամ եւս վերաթարմացնել մղիչ ուժը:

Իրոք, ո՞րն է մեր պայքարի ուղին, եթե երկու բառով, ապա՝ ազգային-ազատագրական պայքար: Ինչպես յուրաքանչյուր ազգի, հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարի նպատակը իր հայրենիքում ազատ ու անկախ ապրելու, զարգանալու եւ ստեղծագործելու իրավունքի իրացումն է: Իսկ այդ իրավունքի իրացման անհրաժեշտ եւ անշրջադարձելի պայմանը սեփական կառավարման համակարգի՝ հայկական պետականության առկայությունն է:

Այս դիտանկյունից Արցախյան ազատագրական պայքարը հայ ժողովրդի իղձերի իրականացման կարեւոր մի հանգրվան է, որը մեր, մեր հայրերի եւ մեր զավակների արյամբ եւ քրտինքով միս ու արյուն է ստացել եւ դարձել համահայկական հաղթանակի, ազգային գաղափարի ներուժի սնուցման աղբյուր:

Այն, որ Արցախը վերջին 30 տարիների ընթացքում համայն հայության մտասեւեռման եւ համախմբման խորհրդանիշն է եղել, անժխտելի է: Իսկ այն ազգային հոսանքը, որը ցանկանում է առօրյայից հանել Արցախը եւ համահայկականության օրակարգը ձեւավորել առանց Արցախի, այլ բան չէ, եթե ոչ թշնամու ջրաղացին ջուր լցնելը, մի քաղաքականություն, որով այսօր զբաղված են Հայաստանի իշխանությունները Փաշինյանի գլխավորությամբ: Ապազգային են այն գաղափարները, որոնք սերմանում են այսօրվա ՀՀ իշխանությունները. Հայաստանը միայն 29 000 կմ չէ, Հայաստանը միայն Հայաստանում ապրող հայերի հայրենիքը չէ:

Հայկական կոչվող պետությունը պետք է հոգա ու տերը լինի իր ազգային առաքելությանը: Հայ ժողովուրդը հայկական պետությանն է պատվիրակել իր իղձերի իրականացման առաքելությունը: Այս դրույթն ամրագրված է հայկական զույգ պետությունների հռչակագրերում:

Շրջափակման 100 օրվա շեմին, պայքարը խորհրդանշող դիմադրության, այս հանգրվանում՝ Արցախի շուրջ համահայկական համախմբումը, Արցախը առանցք դարձնելը, Արցախով հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը մեկ անգամ եւս վերահիմաստավորելը անշրջելի հրամայական է:

ԼՂ հակամարտությունը պետք է լուծվի բանակցությունների միջոցով՝ միջազգային կառույցների միջնորդությամբ ու երաշխիքներով. Արցախի ԱԺ

Արցախի Հանրապետության Ազգային ժողովի խմբակցությունները հանդես են եկել հայտարարությամբ.

«Մի քանի օրից կլրանա Արցախի Հանրապետության 120 հազար բնակչությանը Ադրբեջանի կողմից շրջափակելու 100 օրը: Արհամարհելով Արցախի ապաշրջափակման վերաբերյալ Հաագայի միջազգային դատարանի որոշումը՝ Ադրբեջանի ղեկավարությունն ուժի սպառնալիքով եւ կիրառմամբ շարունակում է Արցախը հայաթափելու քաղաքական ուղեգիծը:

Արցախի Հանրապետությունն իրեն բռնակցելու մտադրության մեջ Ադրբեջանը չի խորշում հակամարդկային միջոցներից եւ ահաբեկչական գործողություններից: Բնական գազի եւ էլեկտրաէներգիայի մատակարարման խափանումները, խաղաղ բնակչության ահաբեկումն ու ազատ տեղաշարժի սահմանափակումները, իսկ վերջերս էլ՝ մարտի 5-ին, իրենց ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ ոստիկաններին գնդակահարելու փաստը գալիս են ապացուցելու, որ նման պայմաններում անընդունելի են ուղիղ երկխոսության մասին խոսակցությունները:

Միեւնույն ժամանակ, համոզված ենք, որ ղարաբաղյան հակամարտությունը, որպես միջազգային օրակարգի հարց, պետք է լուծվի բանակցությունների միջոցով համապատասխան միջազգային կառույցների միջնորդությամբ ու երաշխիքներով, մասնավորապես՝ այդպիսի լիազորությամբ օժտված Մինսկի խմբի համանախագահ երկրների ներգրավմամբ:

Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարությունը քարոզչական տարբեր հնարքներով ապատեղեկացնում է սեփական հանրությանն ու միջազգային կառույցներին՝ նպատակ ունենալով Արցախի ժողովրդի դեմ կիրառվող հումանիտար ճնշումների եւ ահաբեկումների պայմաններում պատրանք ստեղծել «խաղաղության դարաշրջանի» մասին:

Արցախի Հանրապետության Ազգային ժողովի խմբակցությունները, արտահայտելով ժողովրդի կամքն ու դիրքորոշումը, պահանջում են Հայաստանի Հանրապետության իշխանություններից՝ հավատարիմ մնալ ՀՀ Գերագույն խորհրդի 1992թ. հուլիսի 8-ի որոշմանը եւ կասկածի տակ չդնել Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը:

Արցախի խորհրդարանի բոլոր խմբակցությունները վերահաստատում են իրենց հավատարմությունը մեր ժողովրդի կամքն արտահայտող հիմնարար փաստաթղթերին եւ շարունակելու են առաջնորդվել դրանցից բխող գաղափարներով եւ սկզբունքներով:

«Ազատ հայրենիք- ՔՄԴ» խմբակցություն
«Միասնական հայրենիք» խմբակցություն
«Արդարություն» խմբակցություն
«Հայ Հեղափոխական Դաշնակցություն» խմբակցություն
«Արցախի ժողովրդավարական կուսակցություն» խմբակցություն
13 մարտի, 2023թ.
ք. Ստեփանակերտ»:

Պետք է դիմել Անվտանգության խորհուրդ՝ դատարանի որոշումը կատարելու պահանջով

Մենք շարունակելու ենք այս ուղղությամբ աշխատանքները՝ իհարկե Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի հաստատության եւ ՀՀ տարբեր իրավապաշտպան կազմակերպությունների հետ միասին: Մեր առաջնային գործառույթն այս պահին բարձրաձայնելն է, իրազեկելն ու փաստեր ներկայացնելը:

Կարդացեք 4-րդ էջում

Հողի մշակն իրավունք չունի սոված մնալ



Կարծես մի օազիս լինի Արցախը՝ Աստծո շնորհ, դրա համար այս հողի համար ուժեղացել է պայքարը: Այս հողը մեզ պահել է ու պահում է: Մենք դարերով մշակել ենք այս հողն ու նրա քաղցրությունը զգացել ենք աշխատելու ընթացքում: Ես չեմ պատկերացնում, որ որեւէ տեղ կարող եմ գնալ ու ինձ հարազատ ուրիշ հող գտնել:

Կարդացեք 6-րդ էջում

Առաջին ընթերցմամբ ընդունվել է Սահմանադրության փոփոխության մասին օրինագիծը

Մարտի 15-ին գումարված Արցախի Հանրապետության Ազգային ժողովի հերթական նիստում քննարկման էր դրվել առաջին ընթերցմամբ ներկայացված Արցախի Հանրապետության Սահմանադրության փոփոխության մասին նախագիծը:

Հանրապետության նախագահի աշխատակազմի առաջին տեղակալ Ժիրայր Միրզոյանի ներկայացմամբ՝ նախագիծը նպատակ ունի ռազմական դրության ժամանակ ստեղծել հնարավոր ճգնաժամերից խուսափելու իրավական հիմքեր եւ ապահովել կառավարման համակարգի կայունությունն ու անընդհատությունը:

«Գործող Սահմանադրության դրույթներից հատկապես վտանգավոր է այն, որ հանրապետության նախագահի պաշտոնն օրենքով սահմանված որեւէ հիմքով թափուր մնալու դեպքում նախատեսված է նախագահի եւ Ազգային ժողովի արտահերթ ընտրություններ նշանակելու պահանջ: Նույն մեխանիզմն աշխատում է նաեւ Ազգային ժողովի արձակման դեպքում: Նշված իրավիճակում համապետական ընտրություններ նշանակելու հնարավորություն չլինելու դեպքում առաջ է գալիս իրավաքաղաքական ճգնաժամի վտանգ: Նման դեպքում դադարում է գործել Ազգային ժողովը եւ կառավարությունը, ինչը մեր պայմաններում հնարավոր է հասցնի իրավաքաղաքական ճգնաժամի: Հաշվի առնելով Արցախի Հանրապետության անվտանգության ապահովման հրամայականը, Արցախի Հանրապետության առջեւ ծառացած մարտահրավերները, աշխարհաքաղաքական, տարածաշրջանային զարգացումները, ինչպես նաեւ ռազմական դրության պայմաններում պետական կառավարման համակարգի ճկունությունն ապահովելու անհրաժեշտությունը, առաջարկվում է ռազմական դրության ժամանակ նախագահի պաշտոնը թափուր մնալու դեպքում նախագահ ընտրելու իրավունքը վերապահել Ազգային ժողովին»,- իր խոսքում նշել է Ժիրայր Միրզոյանը:

Ներկայացվող նախագծով առաջարկվում է լրացում կատարել Սահմանադրության «Եզրափակիչ եւ անցումային դրույթներ» վերտառությամբ 12-րդ գլխում, որում փոփոխություններ կատարելու իրավունքը գործող Սահմանադրությամբ վերապահված է Ազգային ժողովին: Նախագծով՝ ռազմական դրության ժամանակ, մինչեւ գործող նախագահի լիազորությունների ավարտը, նախագահի պաշտոնը թափուր մնալու դեպքում Ազգային ժողովի խմբակցություններին վերապահվում է իրավունք՝ առաջադրելու եւ ընտրելու նախագահ, որը կպաշտոնավարի մինչեւ գործող նախագահի լիազորությունների ժամկետի ավարտը: Տվյալ եղանակով ընտրված նախագահի պաշտոնավարման ընթացում արգելվում է արձակել Ազգային ժողովը:

Մտքերի փոխանակության բաժնում ԱՀ ԱԺ «Հայ Հեղափոխական Դաշնակցություն», Արցախի «Արդարություն» եւ «Արցախի ժողովրդավարական կուսակցություն» խմբակցությունների տեսակետը ներկայացրել է պատգամավոր Գեղամ Ստեփանյանը.

«Հետպատերազմյան Արցախում սահմանադրական փոփոխությունների թեման պարբերաբար ամենահրատապ քննարկվող նյութերից մեկն էր դարձել՝ կախված նրանից, թե որքան սրություն են ունեցել ներքին քաղաքական հարցերն ու երկրի կառավարման համակարգն ամրապնդելու կամ կատարելագործելու հրամայականը: Մեզ համար հենց այդ՝ պետականությունը պահպանելու եւ այն ցնցումներից հեռու պահելու մղումն է եղել գլխավոր տեղում եւ հենց դրանով էր պայմանավորված մեր համաձայնությունը 2022թ. հունվարից սահմանադրական բարեփոխումների՝ սկզբից քաղաքական, ապա

եւ՝ մասնագիտական հանձնաժողովներին անդամակցելու եւ լիարժեք մասնակցելու իմաստով: Այդ աշխատանքի ամբողջ ընթացքում մենք նկատի ենք ունեցել սահմանադրական բարեփոխումների ամբողջ փաթեթը՝ կամ փոփոխությունների լրիվ ծավալով, կամ էլ նոր Սահմանադրության նախագծի տեսքով: Ինչ որ տեղի է ունեցել հաջորդ ամիսներին՝ սահմանադրական բարեփոխումների կոնցեպտի փոփոխություն, ապա եւ՝ այդ նույն կոնցեպտով խորհրդարան բերված կարճ տարբերակի հետ վերադարձ, այդ ամենը կատարվել է առանց մեր մասնակցության եւ ոչ մեր նախաձեռնությամբ՝ կոնկրետ հանրապետության նախագահի կողմից:

Այս փուլում ներկայացված տարբերակի վերաբերյալ մեր համատեղ տեսակետը հանգում է միայն քաղաքական կողմին: Իրավական տեսանկյունից՝ այս երեւույթի մասին, ինչպես եւ նախատեսված է օրենսդրությամբ, գնահատական տալու իրավասությունը վերապահված է Գերագույն դատարանին: Հաշվի առնելով այս հանգամանքը եւ այն ելակետը, որի մասին նշեցի ելույթի սկզբում, պետական համակարգը բոլոր հնարավոր միջոցներով ամուր պահելու եւ այն ցանկացած, այդ թվում՝ ճգնաժամային իրավիճակում ցնցումներից զերծ պահելու գերակայությունները, մենք՝ Ազգային ժողովի երեք ընդդիմադիր խմբակցությունները, որոշել ենք կողմ քվեարկել ներկայացվող նախագծին»:

Նախագծի վերաբերյալ կարծիք է հայտնել նաեւ Արթուր Թովմասյանը՝ նշելով, որ ցանկացած սահմանադրություն առաջին հայացքից լավ է երեւում, գործադրելուց հետո երեւում են թերությունները: «Առաջին հայացքից լավ էր թվում, որ մեզ նման փոքր երկրներում միաժամանակ անցկացնենք ե՛ւ նախագահական, ե՛ւ խորհրդարանական ընտրությունները, որովհետեւ յուրաքանչյուր համապետական ընտրություն ահռելի գումար է: Բայց չենք նկատել, որ Արցախում կարող է ֆորսմաժորային իրավիճակ ստեղծվել, չենք էլ մտածել, որ հնարավոր է մեր սուբյեկտայնությունը կորցնելու վտանգի առջեւ կանգնենք»,- ասել է ԱՀ ԱԺ նախագահը:

Այնուհետեւ նախագիծը քվեարկության է դրվել եւ միաձայն ընդունվել առաջին ընթերցմամբ:

Հիշեցնենք, որ Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանը նոյեմբերի 22-ին դիմել է Ազգային ժողովի նախագահին՝ Արցախի Հանրապետության Սահմանադրության փոփոխության նախագիծը վերադարձնելու նպատակով՝ այն հանելով շրջանառությունից: Արցախի նախագահի աշխատակազմից նշել են, որ նման որոշման համար պատճառ են հանդիսացել սահմանադրական փոփոխության իրացման ընթացքում հնչած տարաբնույթ քաղաքական գնահատականները, ինչպես նաեւ նախագծի վերաբերյալ հանրության շրջանում առաջացած բացասական արձագանքները, «ինչը կարող էր ներքին պառակտման ու լարվածության հերթական պատճառ դառնալ»:

Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի նախագծում ասվում էր, որ Արցախում խորհրդարանական եւ նախագահական ընտրություններն անցկացվելու են առանձին, համապատասխանաբար՝ 2023 եւ 2024 թվականներին: Սահմանադրության փոփոխությամբ նախատեսվում է նախագահական համակարգից անցում կատարել կառավարման կիսանախագահական համակարգի:

Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Եվրախորհրդարանը կոչ է անում ԵՄ խորհրդին պատժամիջոցներ կիրառել Ադրբեջանի նկատմամբ, եթե վերջինս չկատարի Արդարադատության միջազգային դատարանի որոշումը

Եվրոպական Խորհրդարանի լիագումար նիստը մարտի 15-ին ընդունել է ԵՄ-Հայաստան եւ ԵՄ-Ադրբեջան հարաբերությունների 2021-2022թթ. զեկույցները, որոնք անդրադառնում են Հայաստանի եւ Ադրբեջանի հետ ԵՄ հարաբերությունների առանցքային կետերին, Արցախի հակամարտությանը եւ տարածաշրջանում Եվրամիության դերին՝ կայունության ու խաղաղության հաստատման գործում: Երկու զեկույցները վերահաստատում են՝ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության համապարփակ պայմանագիրը պետք է երաշխավորի Հայաստանի ինքնիշխան տարածքի ամբողջականությունը, Արցախում բնակվող հայ բնակչության իրավունքներն ու անվտանգությունը:

Եվրախորհրդարանն ընդգծում է՝ ղարաբաղյան հակամարտությունը պահանջում է միջազգային իրավունքին համապատասխան համապարփակ քաղաքական կարգավորում՝ հիմնված ՄԱԿ-ի կանոնադրության եւ 1975թ. ԵԱՀԿ Հելսինկյան եզրափակիչ ակտով ամրագրված սկզբունքների վրա, մասնավորապես՝ ուժի կամ դրա սպառնալիքի չկիրառումը, տարածքային ամբողջականությունը, ինքնորոշման իրավունքը, ինչպես նաեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի 2009թ. հրապարակված բանակցային հիմնարար սկզբունքները:

Եվրախորհրդարանը ողջունում է Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարության քայլերն՝ ուղղված տարածաշրջանում հարատեւ եւ կայուն խաղաղության հասնելու համար, սակայն, միեւնույն ժամանակ, դատապարտում է Ադրբեջանի ղեկավարների պահվածքը, ինչը խաթարում է այդ ջանքերը: Մասնավորապես՝ նկատի են առնված հետագա հարձակումների բացահայտ սպառնալիքները, սահմանային հաճախակի ագրեսիան, այսպես կոչված՝ «Արեւմտյան Ադրբեջանի» նկատմամբ տարածքային պահանջները կամ հայ բնակչության նկատմամբ ատելության խոսքի տարածումը, հատկապես՝ կրթության ոլորտում: Երկու զեկույցներում էլ Եվրախորհրդարանը դատապարտում է Ադրբեջանի ռազմական ներխուժումը Հայաստանի ինքնիշխան տարածք: ԵՄ-Ադրբեջան զեկույցում նշվում է բազմաթիվ հայ ռազմագերիների ֆիզիկական բռնության եւ ադրբեջանական ուժերի կողմից հայ խաղաղ բնակիչներին նվաստացնելու ու խոշտանգումների ենթարկելու մասին:

Հայաստանի մասին զեկույցում Եվրախորհրդարանն ընդգծում է, որ ղարաբաղյան հակամարտության բուն պատճառը Լեռնային Ղարաբաղի նախկին ինքնավար մարզի կարգավիճակի եւ բնակչության անվտանգության չլուծված խնդիրն է: Ինչ վերաբերում է 2020 թվականի նոյեմբերի 9-ի հրադադարի մասին հայտարարության 9-րդ հոդվածի կատարմանը, ԵԽ-ն երկու զեկույցներում էլ ընդգծում է, որ Ադրբեջանի արեւմտյան շրջանների եւ Նախիջեւանի Ինքնավար Հանրապետության միջեւ տրանսպորտային եւ հաղորդակցական կապերի ապաշրջափակումը չի կարող ոտնահարել Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականությունը:

Եվրախորհրդարանն ընդգծում է Ադրբեջանի պարտավորություններն Արդարադատության միջազգային դատարանի 2023 թվականի փետրվարի 22-ի որոշումը կատարելու վերաբերյալ, որը պահանջում է Ադրբեջանից՝ ձեռնարկել իր տրամադրության տակ եղած բոլոր միջոցները Լաչինի միջանցքով երկու ուղղություններով մարդկանց, տրանսպորտային միջոցների եւ բեռների անարգել տեղաշարժն ապահովելու համար: Այս համատեքստում Եվրախորհրդարանը կոչ է անում ԵՄ խորհրդին՝ պատժամիջոցներ կիրառել Ադրբեջանի դեմ, եթե Դատարանի որոշումն անհապաղ չկատարվի:

Ավելին, ԵՄ խորհրդարանը դատապարտում է Թուրքիայի առավելապաշտական եւ ապակայունացնող դերը Հարավային Կովկասում, այդ թվում՝ սիրիացի վարձկաններ ուղարկելու միջոցով, որոնք Ադրբեջանի կողմից կռվել են Արցախի դեմ:

Եվրախորհրդարանը Թուրքիային կոչ է անում կառուցողական դեր խաղալ տարածաշրջանում եւ վերանայել Ադրբեջանին իր անվերապահ աջակցությունը: Թուրքիան պետք է շոշափելի քայլեր ձեռնարկի Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման ուղղությամբ: Եվրախորհրդարանը երկու կողմերին, հատկապես Ադրբեջանի իշխանություններին կոչ է անում զերծ մնալ թշնամական հռետորաբանությունից կամ գործողություններից, որոնք կարող են ընկալվել որպես ատելության կամ բացահայտ բռնություն հրահրող խոսք:

ՀՅԴ Եվրոպայի Հայ դատի գրասենյակի նախագահ Գասպար Կարապետյանը, մեկնաբանելով զեկույցները, նշել է. «Զեկույցները հստակորեն դատապարտում են ադրբեջանական ագրեսիան Հայաստանի Հանրապետության դեմ եւ Ադրբեջանի ներխուժումը Հայաստանի ինքնիշխան տարածք: Եվրախորհրդարանը նաեւ կոչ է անում ԵՄ խորհրդին պատժամիջոցներ կիրառել Ադրբեջանի դեմ, եթե նա չկատարի Լաչինի միջանցքի ապաշրջափակման վերաբերյալ Արդարադատության միջազգային դատարանի որոշումը:

Կարեւոր է, որ Ադրբեջանի վերաբերյալ զեկույցում ընդգծվում է, որ Արցախի հակամարտության լուծումը պետք է համապատասխանի միջազգային իրավունքին, մասնավորապես 3 հիմնարար սկզբունքներին»: Ըստ Կարապետյանի՝ «Եվրախորհրդարանի դիրքորոշումը կարեւոր է հայկական կողմի համար, այնուամենայնիվ, ԵՄ գործադիր իշխանությունն է, որ պետք է կոնկրետ միջոցներ ձեռնարկի Ադրբեջանի դեմ՝ հիմք ընդունելով Եվրախորհրդարանի դիրքորոշումը: ՀՅԴ Եվրոպայի Հայ Դատի գրասենյակը կշարունակի եռանդուն կերպով աշխատել այս ուղղությամբ»:

ՀՅԴ Բյուրոյի Հայ Դատի կենտրոնական գրասենյակ

Հակասությո՞ւն, թե՞ վրիպում

Արցախի Հանրապետության անկախության ու նրա ժողովրդի ինքնորոշման իրավունքները սակարկելի չեն: Այս մասին հայտարարարել են Արցախի Հանրապետության նախագահն ու իշխանության տարբեր ճյուղեր, որն ընդունվել եւ պաշտպանվել է Արցախի ժողովրդի կողմից 2022թ. ընթացքում տեղի ունեցած մի քանի բազմահազարանոց եւ աննախադեպ հանրահավաքների ժամանակ:

Այդ հանրահավաքների ժամանակ ժողովուրդը, գիտակցելով խաղաղության գինը, վերահաստատել է՝ տեր լինել 1988-ին սկսված Արցախյան ազատագրական պայքարին ու շարժմանը եւ շարունակել, քանի որ սեփական հայրենիքում ազատ ու անկախ ապրելու իրավունքը բացարձակ արժեք է, որ ձեռք է բերվել շատ թանկ գնով եւ սակարկման ենթակա չէ: Տեղի ունեցած հանրահավաքները եւս մեկ անգամ փաստեցին Արցախի ժողովրդի միակամության ու միասնականության մասին, սակայն պատերազմից հետո, երբ Արցախի Հանրապետությունը կորցրեց իր տարածքի մեծ մասը եւ ունեցավ մարդկային կորուստներ, երբ Արցախն արդեն շուրջ 100 օր է՝ գտնվում է պաշարման մեջ, կտրված արտաքին աշխարհից, ենթարկվում է տարաբնույթ ճնշումների, որոնց նպատակը մեկն է՝ կոտրել ժողովրդի կամքը, հյուծել ու հոգեբանորեն ճնշել, որպեսզի նա հրաժարվի իր ընտրած ուղուց:

Այն, որ ՀՀ օրվա իշխանությունները փորձում են հրաժարվել Արցախից՝ նրա անվտանգության ապահովման պատասխանատվությունն ամբողջությամբ բարդելով ռուսական կողմի վրա, դա ակներեւ է: Սակայն ԱՀ իշխանությունները բազմիցս դատապարտել են ՀՀ իշխանությունների պարտվողական ու զիջողական վարքագիծը՝ պահանջելով նրանցից հավատարիմ մնալ ՀՀ Գերագույն խորհրդի 1992թ. հուլիսի 8-ի որոշմանը եւ կասկածի տակ չդնել Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը, նախանշել «կարմիր գծերը», որոնց հատումն անընդունելի է ԱՀ-ի եւ նրա ժողովրդի համար:

Մեզ համար անսպասելի ու զարմանալի էր ԱՀ նորանշանակ պետական նախարար Գուրգեն Ներսիսյանի կողմից մարտի 7-ին NEWS.am-ի «Ուժի գործոն» հաղորդման ժամանակ հնչեցված արտահայտությունները: Հարցազրույցի ժամանակ նա մասնավորապես ասել է.

«Ես չեմ պատկերացնում, թե երեւանյան եւ ստեփանակերտյան դիրքորոշումների միջեւ կարող են տարբերություններ լինել, հակառակը՝ Երեւանը, երբ հարցը վերաբերում է արցախյան խնդրին, առավելապես հենվում է արցախյան իշխանությունների դիրքորոշման եւ կարծիքի վրա, որն ամբողջությամբ արտացոլում է Արցախի ժողովրդի նպատակները»:

Ճշտող հարցին՝ «Մոտեցումների տարբերություններ այս պահին չկա՞ն այսինքն», պետնախարարը պատասխանել է՝ «Որեւէ կերպ»:

Պետք է ընդգծել, որ նրա արտահայտությունները հակասում են արցախյան հարցի լուծման վերաբերյալ պետական մակարդակով եւ հատկապես ԱՀ Ազգային ժողովի կողմից արված հայտարարություններին, ինչպես նաեւ Արցախի ժողովրդի կողմից 2022թ. հոկտեմբերի 30-ին եւ դեկտեմբերի 25-ին կայացած բազմահազարանոց հանրահավաքների ընթացքում որդեգրված պայքարի սկզբունքներին:

Մասնավորապես, 2022թ. ապրիլի 14-ին ԱՀ ԱԺ-ն հանդես է եկել հայտարարությամբ, որտեղ ընդգծվել է այն փաստը, որ «Հայաստան-Ադրբեջան «խաղաղության» օրակարգով՝ Արցախը Ադրբեջանին բռնակցելու ցանկացած բանակցային գործընթաց ինքնին, ինչպես նաեւ դրանից բխող փաստաթղթի ստորագրումը, տապալում է ոչ միայն Արցախի պետականությունը, այլեւ արցախահայության՝ իր պատմական հայրենիքում ապրելու անքակտելի իրավունքը», եւ պահանջել ՀՀ իշխանություններից՝ հրաժարվել իրենց ներկայիս աղետալի դիրքորոշումից, որովհետեւ «ոչ մի իշխանություն իրավունք չունի «խաղաղության» պատրվակով Արցախի համար անընդունելի կարգավիճակի, ինչպես նաեւ՝ միջազգայնորեն ճանաչված ինքնորոշման իրավունքի բանակցային նշաձողն իջեցնելու»: Այս հայտարարությունը, փաստորեն, ի ցույց է դնում Արցախի հարցի հանգուցալուծման վերաբերյալ ՀՀ եւ ԱՀ իշխանությունների մոտեցումների տարբերությունը:

ԱՀ Անվտանգության խորհրդի կողմից տարածված հայտարարությունները եւս ուղղված էին ՀՀ իշխանությունների վարած կործանարար քաղաքականության մատնանշմանը: 2022թ. հոկտեմբերի 3-ին ԱՀ ԱԽ նիստում Արցախի հարցի վերաբերյալ միաձայն հայտարարություն էր ընդունվել, որտեղ վերահաստատվել է ԱՀ օրենսդիր եւ գործադիր թեւերի միասնական դիրքորոշումը Արցախի ապագայի վերաբերյալ, ընդգծվել, որ ղարաբաղյան հակամարտությունը պետք է կարգավորվի Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի եւ դրա իրացման արդյունքների լրիվ ու անսակարկելի ճանաչման հիման վրա: «Անառարկելի է, որ 1991 թվականին Արցախի ժողովուրդն ինքնորոշվել է միջազգային իրավունքի եւ ԽՍՀՄ օրենսդրության նորմերին համապատասխան, եւ Արցախը երբեւէ անկախ Ադրբեջանի կազմում չի եղել: Ընդորում, Արցախի Հանրապետության միջազգայնորեն չճանաչված լինելը չի նշանակում Արցախի ժողովրդի բնական իրավունքների ու Արցախի Հանրապետության գոյության փաստի բացակայություն: Չնայած բոլոր դժվարություններին ու մարտահրավերներին, այսուհետ եւս մենք շարունակելու ենք մեր ընտրած ճանապարհը սեփական հայրենիքում մեր ճակատագիրն ինքնուրույն որոշելու եւ տնօրինելու ուղղությամբ»,- նշվում է հայտարարության մեջ:

Հակադարձելով ՀՀ իշխանությունների այն հայտարարություններին, որ Արցախի ժողովրդի անվտանգության երաշխավորը բացառապես ռուս խաղաղապահներն են, ԱՀ ԱԽ-ն Արցախի երկարաժամկետ ու կայուն անվտանգության ապահովումը հնարավոր է համարել թե՛ սեփական պաշտպանական հնարավորությունների, թե՛ ռուս խաղաղապահների անժամկետ առաքելության եւ թե՛ Հայաստանի Հանրապետության բոլոր հնարավոր գործիքակազմերի փոխկապվածության պարագայում:

Հայտարարության մեջ անընդունելի է համարվել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության այնպիսի պայմանագրի հնարավոր ստորագրումը, որը կասկածի տակ կդնի Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը, կանտեսի ղարաբաղյան հարցի գոյությունը. «Արցախի Հանրապետությունը եւ արցախահայությունը կանգնած են մայր Հայաստանի պետականության ու ժողովրդի կողքին բոլոր կենսական մարտահրավերների հաղթահարման հարցում, քանի որ դա են ենթադրում մեր համազգային արժեքներն ու շահերը: Մենք ընկալում ենք, որ Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների կարգավորմանը միտված միջպետական պայմանագրի հնարավոր ստորագրումը կարող է դառնալ Հայաստանի Հանրապետության ինքնիշխան ու անվտանգ ապագայի եւ տարածաշրջանային կայունության ու խաղաղության երաշխավորման համար կարեւոր հիմք: Այնուամենայնիվ, հաշվի առնելով այդ հարաբերություններում հայ ժողովրդի անտրոհելի մասի՝ արցախահայության շահերի անխուսափելի առկայությունն ու կարեւորությունը, ընդգծում ենք, որ մեզ համար անընդունելի է որեւէ փաստաթուղթ, որը կարող է անտեսել ղարաբաղյան հակամարտության գոյությունը, հարվածի տակ դնել դրա արդարացի կարգավորման հեռանկարը եւ սահմանափակել Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի եւ դրա իրացման արդյունքների միջազգային ճանաչման հնարավորությունները, այդ թվում՝ տարածքային ամբողջականության սկզբունքի հանդեպ դրա ստորադասման կեղծ օրակարգով»:

Մեկ այլ հայտարարություն ԱՀ ԱԽ-ի կողմից ընդունվել է 2023թ. հունվարի 11-ին, երբ Արցախն արդեն գտնվում էր շրջափակման մեջ, ու ՀՀ վարչապետի՝ նախօրեին տեղի ունեցած ասուլիսի ընթացքում հնչեցրած մի շարք պնդումներ եւ տեսակետներ առաջացրել են մտահոգություններ, քանի որ չեն համապատասխանել ինչպես համազգային պայքարի գաղափարներին, այնպես էլ Արցախի Հանրապետության բնակչության եւ իշխանությունների որդեգրած դիրքորոշմանը:

«ՀՀ իշխանություններին հորդորել են առաջնորդվել բացառապես Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը միջազգային ատյաններում առաջ տանելու եւ պաշտպանելու դիրքորոշմամբ՝ օգտագործելով միջազգայնորեն ճանաչված պետության բոլոր հնարավորություններն ու ողջ գործիքակազմը»,- ասվել է հայտարարության մեջ: Այս երկու հայտարարությունները եւս փաստում են ՀՀ եւ ԱՀ իշխանությունների դիրքորոշումների տարբերությունը:

Վերը բերված փաստարկները ցույց են տալիս, որ նորանշանակ պետնախարարի հնչեցրած միտքը հակասում է առկա իրողությանը, որի առիթով մարտի 8-ին Արցախի Հանրապետության Ազգային ժողովի պետական նախարար Գուրգեն Ներսիսյանին հրավիրել են ներկայանալ ԱՀ ԱԺ՝ իր կողմից հնչեցված արտահայտությունների համար բացատրություններ տալու պահանջով:

Մարտի 10-ին, ԱՀ պետնախարար Գուրգեն Ներսիսյանը, ընդառաջելով ԱՀ ԱԺ բոլոր խմբակցությունների պահանջին, ներկայացել է Ազգային ժողով, եւ ի պատասխան ԱՀ ԱԺ խմբակցությունների ղեկավարների հարցադրմանը՝ նորանշանակ պետնախարարը նշել է, որ իր աշխատակազմի միջոցով արդեն պարզաբանումներ է տվել եւ որպես հիմք պետք է ընդունել դրանք: Նա համոզմունք է հայտնել, որ ԱՀ ԱԺ ապրիլի 14-ի հայտարարությունը շարունակում է մնալ որպես Արցախի պաշտոնական դիրքորոշում:

Նշենք, որ մինչ օրենսդիրների հետ հանդիպումը պետնախարարի աշխատակազմի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժինը «Պետական նախարարի հայտարարությունը Հայաստանի եւ Արցախի իշխանությունների մոտեցումների տարբերությունների վերաբերյալ ոչ միանշանակ է ընկալվել» վերտառությամբ պարզաբանում էր տարածել:

Այսքանով հանդերձ, կարծես թե իրավացի էր ԱՀ նախկին նախագահ Բակո Սահակյանի խորհրդական, այժմ ՀՀ ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցության պատգամավոր Տիգրան Աբրահամյանը, թե «պետնախարարի առաջին քնությունն անբավարար եմ համարում»:

«Ապառաժ»

Պետք է դիմել Անվտանգության խորհուրդ՝ դատարանի որոշումը կատարելու պահանջով

Արցախի շրջափակման պայմաններում մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ծավալած աշխատանքների շուրջ է «Ապառաժ»-ի զրույցը Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպան Գեղամ Ստեփանյանի հետ:

- Երեք ամսից ավելի է՝ շարունակվում է Արցախի շրջափակումն Ադրբեջանի կողմից: Ըստ Ձեզ, արդյո՞ք բոլոր հնարավոր միջոցները գործադրվել են հումանիտար աղետի մասին ահազանգելու համար եւ արդյո՞ք համարժեք են միջազգային արձագանքները:

- Կդժվարանամ պնդել, որ մեթոդներն ու բոլոր խողովակներն օգտագործվել են, որովհետեւ դա մշտական աշխատանք է եւ պետք է հետեւողականորեն «տաք» պահել թեման: Ընդհանուր առմամբ, եթե գնահատենք, թե ի՞նչ միջոցներ եւ խողովակներ են օգտագործվել, կարող եմ ասել, որ բավական ակտիվորեն աշխատել են եւ Արցախի կառույցները, այդ թվում՝ Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը, եւ հայաստանյան կառույցները, եւ հայկական սփյուռքի մեր կազմակերպությունները, որոնք այսօր էլ շարունակում են նույն խնդիրները բարձրաձայնելու ուղղությամբ աշխատանքները: Բայց եւս մեկ անգամ պետք է ընդգծեմ, որ սա չդադարող աշխատանք է: Այն, որ շրջափակումը դեռ շարունակվում է եւ մեր ցանկալի արդյունքին՝ Ադրբեջանին պատասխանատվության ենթարկելու եւ ստիպելու, որ ապաշրջափակի Արցախը եւ հետեւի իր միջազգայնորեն ստանձնած պարտավորություններին, չենք հասել, կարող եմ ասել, որ աշխատանքը պետք է շարունակվի, եւ մեծ հաշվով՝ մինչեւ այդ խնդիրը չլուծվի, որեւէ բավարարվածություն չենք կարող ունենալ:

- Միջազգային արձագանքների առումով՝ արդյո՞ք երկակի ստանդարտներ չեք նկատում մեր հարցի եւ նմանատիպ այլ խնդիրների հետ համեմատություն անցկացնելով:

- Ոչ միայն նկատում ենք, այլ նաեւ դրա մասին բարձրաձայնում ենք, եւ ոչ միայն հրապարակային, այլ նաեւ փակ հանդիպումների ժամանակ: Ես այս ընթացքում առիթ եմ ունեցել հանդիպելու միջազգային պաշտոնյաների, որոնց հետ հանդիպումները միշտ փակ են լինում: Եվ անգամ այն հանգամանքը, որ նրանք չեն համաձայնում, որ այդ հանդիպումները բաց լինեն, խոսում է հենց այդ երկակի ստանդարտների եւ միջազգային դերակատարների մոտ համարձակության բացակայության մասին, որ վեր դասեն մարդու իրավունքների օրակարգը քաղաքական, աշխարհաքաղաքական կամ այլ շահերից: Մշտապես խոսում ենք այն մասին, որ հատկապես այն երկրները, որոնք առաջնորդվում են մարդու իրավունքների եւ ժողովրդավարության կարեւոր արժեքներով, մի պարագայում ամբողջությամբ այլ կերպ են արձագանքում, մեր պարագայում՝ այլ: Իհարկե, դրականորեն պետք է արձանագրել այն, որ շրջափակման ընթացքում մեր իրավիճակի մասին նրանց տեղեկացվածությունը եւ նրանց վերաբերմունքը որոշակի վերափոխման է ենթարկվել:

Եթե մինչեւ շրջափակումն ընկած ժամանակահատվածում նման հանդիպումների ժամանակ նշում էի, որ Ադրբեջանը էթնիկ զտման քաղաքականություն է որդեգրել ու վարում, շատ հաճախ տեսնում էի որոշակի կասկածամտություն կամ կարծիք, թե իբր ուռճացվում է իրավիճակը կամ ավելի բարդ է ներկայացվում, բայց շրջափակումը շատ հարցերի պատասխան տվեց, եւ նրանք եւս համոզվեցին մեր պնդումների ճշմարտացիության եւ արդարացիության մեջ: Նաեւ խոսույթի հստակ տարբերություն եմ նկատել մինչեւ շրջափակումը իմ հանդիպումների եւ դրանից հետո ընկած ժամանակահատվածում տարբեր հանդիպումներից: Եվ կարծես թե տարբեր դերակատարների մոտ կա այն համոզմունքը, որ Ադրբեջանի արածը նպատակաուղղված է Արցախի հայ բնակչությանն իրենց հայրենիքից զրկելուն, եւ այստեղ է գալիս այն հրամայականը, որ այդ համոզմունքը պետք է վերածվի հստակ գործողությունների. եթե չի վերածվում հստակ գործողությունների, ուրեմն գործ ունենք երկակի ստանդարտների հետ:

Եթե կա համոզմունք, որ Ադրբեջանի կողմից վարվում է էթնիկ զտման քաղաքականություն եւ միջազգային հանրությունը հավուր պատշաճի չի արձագանքում դրան, ուրեմն սին եւ դատարկ են բոլոր այն խոսակցությունները, որոնք գեղեցիկ դահլիճներում միշտ բարձրաձայնվում են: Սա այն կարեւոր ուղերձն է, որը եւ իմ հրապարակային ելույթներում եւ փակ հանդիպումների ժամանակ մշտապես բարձրաձայնում եմ տարբեր միջազգային պաշտոնյաների առաջ՝ հույս ունենալով, որ ի վերջո նրանց միջամտությամբ եւ աջակցությամբ ավելի բարձր մակարդակում որոշում կայացնողներն ի վերջո կհանգեն հստակ գործողություններ ձեռնարկելու եզրակացությանը:

44-օրյա պատերազմից հետո ընկած ժամանակահատվածում ՄԻՊ հաստատությունը բազմիցս բարձրաձայնել է Ադրբեջանի հանցավոր գործողությունների մասին, բայց, ցավոք սրտի, դրանք արձագանք չէին գտնում անգամ միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների զեկույցներում: Շրջափակման ժամանակահատվածում առնվազն երեք ազդեցիկ իրավապաշտպան կազմակերպություններ իրենց հստակ դիրքորոշումը հայտնել են՝ պնդելով, որ Ադրբեջանը պետք է անհապաղ վերացնի շրջափակումը: Որոշում կայացնողները մշտապես հղում են անում նաեւ իրավապաշտպան կազմակերպությունների զեկույցներին, այսինքն՝ դրանք ծառայում են որպես ահազանգեր տարբեր պետությունների եւ միջազգային կազմակերպությունների համար: Հիմա այդ ահազանգը կա, ընդ որում՝ շատ դերակատարների կողմից, եւ մենք ակնկալում ենք, որ դա ի վերջո իր գործնական արդյունքը կունենա:

- Բոլորս մեծ ակնկալիքներ ունեինք ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի, Հաագայի դատարանի որոշման հետ կապված, բայց իրականում կարծես միայն կոչերի մակարդակում են դրանք: Արդյո՞ք դատարանի որոշումը գործադրելու միջոցներ չկան:

- Մեզ մոտ մշտապես այն ակնկալիքը կա, որ հարցն անմիջապես լուծում կստանա, բայց, ցավոք սրտի, միջազգային համակարգն այդպես չի աշխատում, եւ եթե համեմատական տանելու լինենք, ապա պետք է կուտակման էֆեկտի մասին խոսենք: Պետք է ինչ-որ թեմայի շուրջ ազդակներն այնքան կուտակվեն, որ միջազգային հանրությունը գնա կոնկրետ գործողությունների: Համենայն դեպս, մենք պետք է այդ ուղղությամբ աշխատենք: Իհարկե, այդտեղ կան քաղաքական, տնտեսական շահեր, որոնք մեր օգտին չեն այս պահին աշխատում եւ կարճաժամկետ ու երկարաժամկետ հեռանկարում մեր օգտին էլ չեն լինելու: Բայց մենք ունենք մի կարեւոր խաղաքարտ. այն է, որ այս պայքարում մենք արդարացի ենք, ճշմարտությունը մեր կողմն է, եւ ինչպես նշեցի, միջազգային տարբեր դերակատարների եւ պաշտոնյաների մոտ համոզմունք կա, որ Արցախի ժողովուրդն իրավունք ունի ապրել իր հողի վրա, կա արձանագրված խտրականություն եւ կան մարդկանց կյանքի իրավունքի նկատմամբ Ադրբեջանի կողմից անընդհատ ոտնձգություններ:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի քննարկումների ժամանակ գրեթե բոլոր անդամները նախ որեւէ ձեւով չեն լեգիտիմացրել Ադրբեջանի բնապահպանական պահանջները, այսինքն՝ անտեսել եւ կեղծ են համարել Ադրբեջանի բնապահպանական մտահոգությունները, բացառությամբ մեկ-երկու երկրի: Հստակ նշել են, որ Արցախի ժողովրդի իրավունքները պետք է ապահովել: Սակայն հարցը Անվտանգության խորհրդում քաղաքական տարբեր շահերով, գործընթացներով պայմանավորված փաստաթղթի չվերածվեց: Բայց դրանից, այնուհետեւ ՄԱԿ-ի արդարադատության միջազգային դատարանում հարցը քննության վերցվեց եւ դատարանի որոշումը կայացվեց 2023թ. փետրվարի 22-ին՝ հստակ արձանագրելով, որ Ադրբեջանը պարտավոր է ապահովել միջանցքով մարդկանց, մեքենաների եւ բեռների երկկողմանի անվտանգ տեղաշարժը:

Մենք գործ ունենք մի երկրի հետ, որը բացահայտ եւ անթաքույց հայտարարում է, որ չի պատրաստվում հետեւել միջազգային կոչերին: Ալիեւը բազմաթիվ հայտարարությունների եւ հարցազրույցների ժամանակ ասել է, որ չկա միջազգային իրավունք: Մենք գործ ունենք մի երկրի հետ, որը չի կատարում ՄԱԿ-ի արդարադատության միջազգային դատարանի որոշումը: Բայց այնպես չէ, որ դատարանի որոշումը չկատարելը չպետք է իր հետեւանքները չունենա: Միջազգային իրավունքով կա սահմանված ընթացակարգ. եթե կողմերից մեկը չի կատարում դատարանի որոշումը, ապա մյուս կողմը պետք է նման հարցով դիմի Անվտանգության խորհուրդ, որը պետք է որոշի դատարանի որոշման կատարման հետագա քայլերը: Այդ քայլերի մեջ կարող են լինել պատժիչ, պարտադրող գործողություններ: Հիմա մենք հենց այդ փուլում ենք. մոտ քսան օր է անցել որոշման հրապարակումից. Ադրբեջանը չի կատարում այն, եւ ժամանակն է, որ այդ հարցով նորից Անվտանգության խորհրդի նիստ գումարվի: Կարծում եմ, որ եթե իրավիճակը շարունակում է մնալ այսպիսին, ապա ՀՀ-ն պարտադիր պետք է դիմի Անվտանգության խորհուրդ՝ պահանջելով, որ Ադրբեջանը կատարի դատարանի որոշումը: Այս ուղղությամբ պետք է երկկողմ աշխատանքներ տարվեն Անվտանգության խորհրդի բոլոր անդամների հետ՝ նրանց դրական վերաբերմունքը եւ հարցի վերաբերյալ արդարացի եւ ճիշտ դիրքորոշումը երաշխավորելու եւ ապահովելու համար:

- Իսկ ինչ-որ ժամկետ կա՞ Անվտանգության խորհրդին այդ հարցով դիմելու համար:

- Եթե դատարանի որոշման մեջ կատարման ժամկետներ չեն նշվում, ապա դրանք անհապաղ իրագործման ենթակա են: Եթե դատարանը որոշել է, որ Ադրբեջանը պետք է ապահովի ազատ տեղաշարժը միջանցքով, ապա հրապարակման պահից սկսած էլ Ադրբեջանը պետք է այդ ուղղությամբ գործողություններ ձեռնարկեր: Վճռի գործադրման համար մյուս կողմի՝ Անվտանգության խորհուրդ դիմելու ժամկետ էլ չկա: Կարծում եմ, որ որոշակի ողջամիտ ժամկետ սպասելը ճիշտ էր, որպեսզի ավելի ամուր լինեն պնդումները, որ Ադրբեջանը հրաժարվում է կատարել, բայց կարծես թե այդ ողջամիտ ժամկետն էլ է արդեն լրանում եւ այդ ուղղությամբ պետք է գործողություն ձեռնարկել:

- Տեղյակ ենք, որ ՄԻՊ գրասենյակը ստեղծված իրավիճակի, ԱՀ երեք քաղաքացիների սպանության վերաբերյալ մի շարք զեկույցներ է պատրաստել: Որտե՞ղ են ներկայացվում այդ զեկույցները եւ ի՞նչ արդյունքներ կարելի է ակնկալել:

- Զեկույցների պատրաստմամբ երկու նպատակ ենք հետապնդում: Առաջինը՝ ՄԻՊ-ը, որպես անկախ պետական մարմին, փաստեր է հավաքագրում: Երկրորդն այն է, որ ահազանգ է հնչեցնում միջազգային հանրությանը առկա իրավիճակի մասին եւ առաջարկներ է ներկայացնում, թե ինչ ձեւով կարելի է կանխել կամ ինչ միջամտություն պետք է ցուցաբերել:

Հատկապես 44-օրյա պատերազմի ընթացքում եւ դրանից հետո լավ պրակտիկա ենք որդեգրել, որ մարդու իրավունքների խախտումներին անմիջապես արձագանքենք զեկույցով, որովհետեւ նման իրադարձությունների ժամանակ ադրբեջանական քարոզչամեքենան սկսում է միջազգային հարթակներում իր նարատիվները տարածել եւ խեղաթյուրել իրականությունը: Դրա համար ամենահիմնավորը հստակ փաստերի արձանագրման հիման վրա զեկույցներ պատրաստելն է, եւ դա է պատճառը, որ դեպքից հետո մեկ-երկու օրվա ընթացքում պատրաստեցինք այդ զեկույցը, որ տարբեր երկրներում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունները, Սփյուռքի կազմակերպությունները, տարբեր պաշտոնյաներ կարողանան ձեռքի տակ ունենալ նյութ, որը փաստարկված է եւ ցանկացած հանդիպման, խոսակցության ժամանակ ուղղակի դնեն զրուցակցի առաջ՝ նկարներով, տեսանյութերով, արձանագրված փաստերով՝ ցույց տալու համար, թե որտեղ է Ադրբեջանը ստում եւ որն է իրականությունը:

Բոլոր զեկույցներն ուղարկվում են միջազգային տարբեր կազմակերպություններ, տարածվում են ՄԱԿ-ում, ԵԱՀԿ-ում, ներկայացվում են Եվրոպական խորհրդարանի պատգամավորներին, տրամադրվում են միջազգային իրավապաշտպան կազմակերպություններին, ուղարկվում են Արցախի եւ ՀՀ բոլոր դիվանագիտական ներկայացուցչություններին, որոնք իրենց հերթին տարածում են իրենց երկրներում երկկողմ շփումների ժամանակ: Երեք ոստիկանների սպանության վերաբերյալ զեկույցն ուղարկել ենք նաեւ միջազգային լրատվամիջոցներին, որոնք եւ շրջափակման թեման են ինչ-որ ձեւով լուսաբանել, եւ 44-օրյա պատերազմը: Այս թեմայի վերաբերյալ նաեւ հետադարձ հետաքրքրվածություն է եղել, շուրջ 6-7 հարցազրույցներ եմ վարել միջազգային մեդիայի ներկայացուցիչների հետ կոնկրետ թեմայով, որը դիտարկել ենք Արցախի նկատմամբ իրականացվող էթնիկ զտման քաղաքականության համատեքստում:

Մենք շարունակելու ենք այս ուղղությամբ աշխատանքները, իհարկե՝ Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության եւ ՀՀ տարբեր իրավապաշտպան կազմակերպությունների հետ միասին: Մեր առաջնային գործառույթն այս պահին բարձրաձայնելն է, իրազեկելն ու փաստեր ներկայացնելը:

Հարցազրույցը՝ Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆԻ

«Արցախի ժողովրդավարական կուսակցություն». 2022թ. ֆինանսական միջոցների աղբյուրների եւ ծախսերի, ինչպես նաեւ գույքի մասին հաշվետվություն եւ անկախ աուդիտորական եզրակացություն

audit pro
Աուդիտ Պրո ՓԲԸ
ԱՀ, ք. Ստեփանակերտ
Վ. Մամիկոնյան 29/6
+ 37447 959575
www.auditpro.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արցախի Ժողովրդավարական կուսակցության ղեկավարությանը

Կարծիք

«Կուսակցությունների մասին» Արցախի Հանրապետության օրենքին համապատասխան մենք աուդիտի ենք ենթարկել Արցախի Ժողովրդավարական կուսակցության (այսուհետ՝ Կուսակցություն) ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին հաշվետվությունը՝ 2022թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար (այսուհետ՝ Հաշվետվություն):
Մեր կարծիքով, կից 2022թ. Հաշվետվությունը, ներառելով Կուսակցության հաշվում մուտք արված և ծախսված դրամական միջոցների, Կուսակցության անշարժ և շարժական գույքի, ինչպես նաև օտարված կամ դուրս գրված գույքի վերաբերյալ տեղեկատվությունը, տալիս է դրանց վերաբերյալ ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Արցախի Հանրապետության կառավարության 2019թ. դեկտեմբերի 19-ի թիվ 1082-Ն որոշման:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը Հաշվետվության աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հ.Գ. ԱՀ բնակարանային կոմիտեից «Ապառաժ»-ին տեղեկացրել են, որ պետության կողմից բնակտարածք ստանալու համար 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետեւանքով առաջին խմբի անժամկետ զինվորական հաշմանդամ ճանաչված անձանց զինվորական հաշմանդամությունը պետք է սահմանված լինի անժամկետ:

«Ինչ վերաբերում է առաջին խմբի անժամկետ զինվորական հաշմանդամ ճանաչված անձանց՝ հաշվառված եւ բնակարանով ապահովված ընտանիքների թվին, տեղեկացնում ենք, որ հաշվառված 16 ընտանիքներից 9-ն ապահովվել են բնակարանով»,- նշվում է կոմիտեի պատասխանի մեջ: Կոմիտեից չեն մեկնաբանել բնակարանի փոխարեն փոխհատուցում ստանալու հնարավորության մասին հարցը:

Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Նժդեհը դարձյալ կանչում է դաշնակցական երիտասարդներին

Շուրջ 70 տարի հետո Սյունիքի հրամանատարը դարձյալ համախմբում է իր գաղափարակից ընկերներին: Սյունիքից լսելով Նժդեհի կանչը, 2023թ. փետրվարի 6-ին Երեւանում ՀՅԴ երիտասարդական համագումարի մեկնարկից հետո իրենց առաքելության նկատմամբ լրջախոհ ընկերները մեկնեցին Գորիս:

Հայրենիքում ՀՅԴ երիտասարդական առաջին ձեռնարկն էր, որին ես ներկա գտնվեցի:

Խանդավառված էի... Երբ սրահ հասանք, առաջինը համագումարի պաստառը ուշադրությունս գրավեց: Նրա վրա տարբեր երկրներից համագումարին մասնակցող ՀՅԴ ուսանողական, երիտասարդական եւ պատանեկան միությունների խորհրդանշաններն էին, ինչպես նաեւ՝ համագումարի կարգախոսը, որը ներկայացնում էր Գ. Նժդեհի հանրածանոթ խոսքը. «Եթե ուզում ես գուշակել ազգի ապագան, նայիր նրա երիտասարդությանը»:

Համագումարի միտքը պարզ էր արդեն՝ լուսարձակը դրվում էր ազգի ապագան կերտելու գործում երիտասարդների դերի վրա:

Համագումարի բացմանը տեսա բոլոր ընկերներին ու ընկերուհիներին, որոնց ծանոթ էի հեռուստատեսությունից կամ սոցիալական ցանցերից, երբ նրանք մասնակցում էին հանուն հայրենիքի փրկության ցույցերին եւ ոչ մի ջանք չէին խնայում՝ արթնացնելու ժողովրդին հայրենիքին ու ազգին սպառնացող վտանգները կասեցնելու համար: Այնտեղ էին նաեւ բոլոր այն ընկերները, որոնք նույն ցույցերի ժամանակ բերման ենթարկվեցին, ձերբակալվեցին եւ ամիսներով բանտերի մեջ մնացին: Նրանց պայքարի ոգին չի մարել: Հակառակ բոլոր դժվարություններին ու արգելքներին՝ նրանք նորից գտնվում են պատնեշի վրա՝ կրկին Արցախի ձայնը բարձրացնելու եւ հասցնելու աշխարհի տարբեր անկյուններ:

Ֆիզիկապես բացակա էին նրանք, որոնք 2020թ. Արցախյան քառօրյա պատերազմում իրենց ամենաթանկը զոհելով՝ պաշտպանեցին հայրենիքը, եւ նրանք, որոնց մուտքը Հայաստան արգելվեց հայ ազգի ձայնը բարձրացնելու եւ Արցախի՝ Ադրբեջանի մաս դառնալը մերժելու իրենց կեցվածքի համար:

Ընկերներից տեղեկացա, որ համագումարը պիտի կայանար Արցախում, սակայն որովհետեւ երկու ամսից ավելի Արցախը գտնվում էր շրջափակման մեջ, վայրը տեղափոխվեց Սյունիք:

Բացմանը Արցախի ընկերները տեսաուղերձով հայտնեցին իրենց պատգամը՝ հաստատելով, որ թեեւ ֆիզիկապես ներկա չեն գտնվելու, սակայն բոլոր միջոցներով պետք է պայքարեն հայրենիքն ու հայի ինքնությունը պահելու համար:

Ողջունելի էր համագումարը Սյունիք տեղափոխելը: Ինչո՞ւ Սյունիք: Որովհետեւ Սյունիքը նույնքան կարեւոր դիրք ունի եւ նույնքան կարեւոր է պահպանել նրա հայկական ինքնությունը, որքան Արցախինը: Սյունիքն ու նրա միջանցքը հանդիսանում են պանթուրքիզմի գաղափարի իրականացման արգելքը: Թշնամին մինչ օրս պայքարում է այդ միջանցքը գրավելու համար, հետեւաբար մեր պարտականությունն է Արցախի հետ միասին մեր ուշադրությունը դարձնել նաեւ դեպի Սյունիք:

Ինձ ամենից շատ գրավեց տիրող մթնոլորտը. աշխարհի տարբեր կողմերից ժամանած, սակայն նույն գաղափարին հավատացող ու ծառայող ընկերների զրույցը ոգեշնչող էր: Կարծում էի, թե յուրաքանչյուր երկրի երիտասարդությունը միայն իր մտահոգություններով տարված պետք է լիներ, սակայն՝ ո՛չ, գլխավոր մտահոգությունը մեկն էր՝ Արցախը, իսկ գաղափարը՝ պայքարել հասնելու մեր նպատակին՝ Արցախ եւ Սյունիք հայրենիքների վերելքին եւ այդ ուղիով ազատ, անկախ ու միացյալ հայրենիքին:

Գարեգին Նժդեհի շունչը թեւածում էր սրահում: Կասկած չունեմ, որ համագումարին եւս Նժդեհյան գաղափարախոսությամբ ու արիությամբ օրակարգեր սերտվեցին եւ բանաձեւեր ամրագրվեցին: Անհամբեր կսպասենք համագումարի աշխատանքների ամփոփմանը:

Արփի ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հողի մշակն իրավունք չունի սոված մնալ

Երկիրը սեր է, հողը՝ կյանք... Հո՞ղ, ավելի ճիշտ կլինի ասել՝ սուրբ նշխարհ, որովհետեւ նրա գրկում են ամփոփված հազարավոր հայորդիների անմեղ սրտեր, նրանց արյամբ ու քրտինքով է դարեր ի վեր սնուցվել հող հայրենին: Հայոց սուրբ հողը մեր հարատեւության խորհրդանիշն է: Մենք կանք, քանի դեռ կա մեր հողը, որովհետեւ այս քարակոփ հողում են ամրացած մեր արմատները, այստեղ, այս քարքարոտ հողում է մեր տունը, մեր դրախտը, մեր էությունն ու մեր հայրենիքը:

Մեզ ստիպում են արյամբ հագեցնել մեր հողի ծարավը, մինչդեռ նա այնքան կարոտ է ջրի, վար ու ցանքսի, մշակի գուրգուրող ձեռքերի:

Դարեր ի վեր արցախցին ապրել է իր հայրենի Արցախ աշխարհում՝ շենացնելով ու ծաղկեցնելով այն, սակայն թշնամիները հաճախ են հարձակվել, ավերել ու ավարել, ու ամեն անգամ արցախցին ավելի շատ է սիրել իր հողը, ավելի ամուր կառչել նրանից:

Հայոց հողը շատ պատերազմներ է տեսել, գերեվարվել, ու խենթացած այսօր աղաղակում է հայ հողագործին սպասելով:

Արցախը շարունակում է մնալ շրջափակման մեջ: Օրերը գլորվում են, փոխվում է տարին, եղանակը, ամիսը: Արդեն գարուն է, իսկ դա նշանակում է, որ հայոց հողի սիրահար մշակները պետք է իրենց ջերմությունն ու սերը փոխանցեն մայր հողին, քրտինք խառնեն հողին ու հողից կյանք ստանան:

Արցախցին ուժեղ է իր հայրենիքով, հայրենիքը՝ իր արարչագործ զավակներով: Հայրենի հողից շունչ առնող, նրա սիրով ապրող անհատներից է Ալյոշա Գաբրիելյանը, ով իր երկարամյա վաստակի ընթացքին զուգահեռ՝ գրչի հետ միասին ձեռքին ունեցել է նաեւ բահը:

Ալյոշա Գաբրիելյանը Արցախյան շարժման առաջամարտիկներից է, եղել է Ասկերանի նախաձեռնող խմբի անդամ: Ավարտել է Երեւանի Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի ֆիզիկայի ֆակուլտետը, դասավանդել է տարբեր դպրոցներում, ծառայել է խորհրդային բանակում: Ամուսնացել է Լյուդմիլա Գրիգորյանի հետ ու տեղափոխվել Ասկերան:

Խորհրդային տարիներին, երբ սկիզբ էր առել Արցախյան շարժումը, նա եղել է կրթության շրջանային բաժնի պետ, սակայն հանուն շարժման ակտիվության նա թողել է զբաղեցրած պաշտոնը՝ ղեկավարության կողմից ճնշումների չենթարկվելու համար:

1989-ից առ այսօր Դաշնակցության շարքերում է: Եղել է ԱՀ ԱԺ 3 գումարումների պատգամավոր: 75տարեկանում նրա հիմնական զբաղմունքը հողագործությունն է:

Հողագործությամբ նա դեռ երիտասարդ տարիներից էր զբաղվում: Հայրը հողի մեծ մշակ էր, ումից եւ ձեռք է բերել հողի հետ աշխատելու հմտություններ:

«Դեռեւս ԽՍՀՄ ժամանակաշրջանից՝ Գորբաչովյան վերակառուցման տարիներից զբաղվել եմ գյուղատնտեսությամբ, հիմնականում՝ ջերմոցային տնտեսությամբ, ունեմ նռան եւ արքայանարնջի այգի»,-ասել է Ալյոշա Գաբրելյանը:

Նա հիմնականում զբաղվում է կանաչեղենի, լոլիկի, վարունգի եւ սմբուկի աճեցմամբ: Հիմնական եկամուտը ձեռք է բերում հողի հետ աշխատանքից՝ վաղ գարնանն ու ուշ աշնանը ստացված բերքն իրացնելով:

«Պատերազմից հետո կառավարությունն ուներ ջերմոցային տնտեսությունների հիմնադրման ծրագիր, որից եւ օգտվել եմ: Այսօր ունեմ 730 ք/մ տարածքով 2 ջերմոց: Հոսանքի եւ գազի բացակայության պայմաններում չունեմ ջեռուցման համակարգ, սակայն փորձում եմ օգտագործել արեւի էներգիան: Այս պայմաններում ես կարողանում եմ հիմնական բաց գրունտում ստացվող բերքից 1-2 ամիս առաջ շուկա դուրս հանել ջերմոցում աճեցվող բերքը»,- նշել է նա:

Գարնանային այս օրերին այգիներում արդեն սկսվում են նախապատրաստական աշխատանքները: Ալյոշա Գաբրիելյանի այգում եւս նախապատրաստական եռուզեռ է, որին ընգրկված են նրա ընտանիքի բոլոր անդամները:

«Սածիլների աճեցմանը դեռեւս հունվարից եմ նախապատրաստվում: Սածիլները հատուկ պայմաններում են աճեցվում, որպեսզի չցրտահարվեն: Սրանք սերմեր են, հիբրիդներ են, որոնք շրջափակման պայմաններում դժվարությամբ եմ ձեռք բերել եւ աճեցրել, իսկ մարտի 20-ին արդեն աճեցված սածիլները պետք է տեղափոխեմ ջերմոցներ:

Այգում ունեմ ծառեր, որոնք պահանջում են հատուկ մշակություն, ինքս պետք է մշակեմ, իսկ մյուս աշխատանքները կատարում են ընտանիքիս անդամները:

Ասկերանը իր բնակլիմայական պայմաններով շատ նպաստավոր է, քանի որ հնարավորություն է ընձեռում աճեցնել չոր արեւադարձային մրգեր: Գերադասում եմ օրգանական պարարտանյութեր օգտագործել, ունեմ ոռոգման լավ համակարգ, որն առատ բերքի ստացման կարեւոր նախապայմաններից է»,- ասել է Ալյոշա Գաբրիելյանը:

Արցախում շատ այգիներ այսօր դարձել են սահմանամերձ, գտնվում են թշնամու նշանառության տակ, եւ հենց թշնամու աչքի առջեւ է արցախցին մշակում իր հողը: Այդպիսին է նաեւ Ալյոշա Գաբրիելյանի այգին: Ա. Գաբրիելյանը համոզված է, որ դա չպետք է վախեցնի իրենց՝ ապրել ու արարել սեփական հայրենիքում, հակառակը՝ թշամուն պետք է ի ցույց դրվի այս հողում ապրելու արցախցու կամքն ու համառությունը:

«Դիրքերը շատ մոտ են, թշնամու նշանառության տակ ենք: Տղայիս հողատարածքն ավելի շատ է դիտարկվում: Ասկերան քաղաքից ընդամենը 500 մ հեռավորության վրա արդեն նշանառության տակ են այգիները: Այս ուղղությամբ դեռ կրակոցներ չեն եղել, բայց Խրամորթի եւ Նախիջեւանիկի ուղղությամբ վերջերս կրակոցներ եղել են: Ամեն դեպքում, կարեւոր է հողի մշակությունը՝ թեկուզ նշանառության տակ, որովհետեւ իրենք փորձում են վախեցնել. գիտեն՝ վաղվա մեր բերքն այսօրվա աշխատանքի մեջ է, ուստի փորձում են ամեն կերպ խանգարել այդ աշխատանքներին»,- նշում է հողագործը:

Շրջափակումը ստիպեց, որպեսզի մարդիկ հասկանան, որ պարենամթերքի պակասը իրենց՝ հողը չմշակելու մեղքի արդյունքն է: Ալյոշա Գաբրիելյանը համոզված է, որ հողի մշակն իրավունք չունի սոված լինելու: «Եթե սիրում ես հողն ու մշակում ես այն, նա քեզ պահում է: Դու էլ պետք է պահես ու պաշտպանես այդ հողը»,- ընդգծել է Ալյոշա Գաբրիելյանը:

Նրա կարծիքով՝ շրջափակման պայմաններում, երբ մարդկանց մի մասը հուսահատվել են, հողի հետ աշխատանքը փրկություն է մարդկանց համար:

«Կարծես վերանում ես ամեն ինչից, երբ քո ձեռքով ինչ-որ բան ես աճեցնում: Ձգում է հողը: Ինչպե՞ս թողնեմ այս հողն ու գնամ, չէ՞ որ այստեղ ներդրում եմ կատարել, սա իմ սեփականությունն է, իմ ընտանիքն այստեղ է արմատներ գցել, իմ զավակներն ու թոռներն այստեղ են: Հողը ձգող հատկանիշ ունի, եւ ասում է՝ ինձ մշակիր եւ ընտանիքդ պահիր: Այս հողերը չի կարելի կորցնել. մեր հողերը բերրի հողեր են»,- ասել է նա:

Ալյոշա Գաբրիելյանը շրջափակման մեջ է արդեն 2-րդ անգամ: Նման կացության մեջ հայտնվել է նաեւ Արցախյան շարժման եւ առաջին պատերազմի տարիներին, որը, նրա խոսքով, ավելի ծանր ու խիստ էր:

«Եթե համեմատություն անցկացնեմ՝ 88-ից հետո շրջափակումն ավելի սաստիկ էր, սակայն այն ժամանակ օդով՝ ուղղաթիռներով, առաջին անհրաժեշտության պարագաներ՝ վառելիք եւ զինամթերք էին տեղափոխում: Բացի դրանից, կոլտնտեսություններ կային, որոնք ունեին անասուններ, պարենամթերք: Այն ժամանակ ստեփանակերտցիները դուրս էին գալիս գյուղեր սնունդ գտնելու համար, որովհետեւ գյուղերում կյանք կար, մթերք կար: Այն տարիներն ավելի խիստ են եղել: Եթե հիմա ժամանակ առ ժամանակ անջատում են գազն ու էլեկտրականությունը, ապա այն ժամանակ ո՛չ գազ կար, ո՛չ հոսանք, վառելափայտ էինք օգտագործում: Արտաքին աշխարհի հետ ընդհանրապես կապ չկար, լուրերը լսում էինք «Ազատության ձայն»-ի ալիքով»,- հիշում է Ա. Գաբրիելյանը:

Նրա խոսքով՝ թեեւ պայմանները ծանր էին, սակայն տղաները կռվում էին գիտակցաբար:

«Այն ժամանակ միասնություն, ընդհանուր գաղափարախոսություն կար, շարժման մաքրություն կար: Հայությունը միասնական էր՝ Հայաստան-Արցախ-Սփյուռք: Հայաստանից, սփյուռքից հայորդիներ էին այստեղ կռվում, որի արդյունքում էլ կարողացանք հաղթանակ տանել: Հիմա մի քիչ այլ է. միասնություն էլի կա, սակայն այն համահայկական բնույթ չի կրում: Կարելի է ասել, որ արցախցիները միայնակ են մնացել թշնամու դիմաց եւ բոլոր դժվարություններին դիմակայում են միայնակ: Պետք է դիմակայենք, ուրիշ տարբերակ չունենք, չենք կարող դարերով մեզ ժառանգված մեր պապենական հողից հրաժարվել: Սերունդները մեզ չեն ների, Աստված ու մեր հետնորդները կանիծեն մեզ, եթե մենք չպայքարենք, թողնենք այս հողն ու գնանք»,-ասել է Ա. Գաբրիելյանը:

Նա պատմում է, որ թեեւ խորհրդային տարիներին ժողովուրդը գաղափարապես հասունացած չէր, որովհետեւ կոմունիստական կուսակցությունն այլ քարոզչություն ուներ, սակայն մարդկանց մոտ կար ազատ ապրելու, սեփական հայրենիքն ու ճակատագիրը ինքնուրույն տնօրինելու ցանկություն: Ժողովուրդն այն համոզմունքին էր, թե կարելի է վերակառուցման քողի ներքո իրագործել այդ ծրագիրը, որովհետեւ ժողովրդավարությանը բնորոշ այնպիսի տարրեր էին նկատվում, ինչպիսիք էին՝ մարդու իրավունքներ, խոսքի ազատություն եւ այլն, ու հենց դա էլ ստիպեց մարդկանց բարձրաձայնել իրենց իրավունքների մասին,սակայն հանդիպեցին մի մեծ պատնեշի:

«ԽՍՀՄ-ը, ի դեմս կոմունիստական կուսակցության, որոշեց, որ ժողովուրդները պետք է ինտերնացիոնալ դաստիարակությամբ միասին ապրեն ու Ղարաբաղի հարցը սոցիալ-տնտեսական խնդիրների անվան տակ լուծվի: Որոշակի գումար են հատկացրել՝ իբրեւ թե այդ խնդիրները լուծելու համար, սակայն տեսանք, որ դա հնարավոր չէ, եւ հասկացանք, որ ինքնուրույն պետք է լուծենք մեր հարցերը, ու դուրս եկանք փողոց: Մենք սկզբից միացման գաղափարով ու պահանջով էինք դուրս եկել փողոց, սակայն հետագայում մեզ շեղեցին այդ ճանապարհից:

→ 7

Հայը շարունակէ կարեւորութիւն ընծայել իր կրթական մակարդակին ու տէրն ու կրողը մնայ իր դարաւոր մշակոյթին

Համազգայինի Կեդրոնական Վարչութեան ատենապետ Զաքար Քէշիշեանի խօսքը՝ 2023թ. մարտի 17-ին Լիբանանում կայացած Համազգայինի 95-ամեակի անդրանիկ հանդիսութեան ժամանակ.

«Համազգային Հայ Կրթական ու Մշակութային Միութեան հիմնադրութեան յոբելենական այս հանդիսութիւնը կատարեցինք հայութեան համար ամենէն դժնդակ ու օրհասական օրերուն:

Շրջափակման մէջ է հայրենի Արցախը: Տակաւին չենք թօթափած մարդկային ու հողային ահաւոր կորուստներուն տագնապը: Հայրենի բնակչութեան նկատառելի մաս մը անտարբեր է արցախահայութեան ճակատագրին նկատմամբ: Քաղաքատնտեսական ահռելի տագնապի մէջ է սփիւռքի կարեւորագոյն գաղութներէն՝ լիբանանահայութիւնը: Նոյնպիսի կացութեան մէջ է մայր գաղութը՝ հալէպահայութիւնը, որ այժմ կը կրէ նաեւ աղետալի երկրաշարժին պատճառած տառապանքը: Տնտեսական դժուարութիւններ, բայց մանաւանդ, իւրաքանչիւր սերնդափոխութեան հետ, ազգային արժեհամակարգէ հեռանալու եւ ուծանալու վտանգը առաւել կամ նուազ չափով կը դիմագրաւեն սփիւռքահայ գրեթէ բոլոր գաղութները: Հայախօսութիւնը աղետալի անկումի մէջ է:

Ահա այս մարտահրաւէրներու գիտակցումով է, որ Համազգայինը այսօր Լիբանանի մէջ կը սկսի իր հիմնադրութեան 95-ամեակի համագաղութային հանդիսութիւններու շարքին:

Բայց միթէ պայմանները աւելի՝ ձեռնատու եղած են 95 տարիներ առաջ, երբ մեր լուսամիտ հիմնադիրները, հայոց ցեղասպանութենէն ընդամէնը 13 տարիներ ետք, երբ տակաւին չէր իսկ ձեւաւորուած կազմակերպ սփիւռքը, Համազգայինի հիմնադրմամբ, մտայղացան ցեղասպանութենէն ճողոպրած հայութիւնը ի մի հաւաքել հայ դպրութեան ու մտքի արգասիք՝ հայ մշակոյթին շուրջ:

Միթէ աւելի՝ ձեռնհաս մարդիկ կային ամենուրէք, ուր, «օտար-ամայի ճամբէքի վրայ», Համազգայինի նոր կառոյց կը հիմնուէր գրեթէ ամէն տեղ, ուր կեանքի պայմաններու բերումով բուռ մը հայութիւն համախմբուէր:

Եւ վերջապէս, օրինակ բերելով Համազգայինի Լիբանանի կառոյցի կեանքէն, միթէ աւելի՝ խաղաղ ու տնտեսապէս բարւոք էր լիբանանեան հայրենիքին քաղաքատնտեսական կացութիւնը, երբ Լիբանանի քաղաքացիական կռիւներուն առընթեր, օրուան վարչական պատասխանատուները մտայղացան ու կազմակերպական կուռ աշխատանքով ու օրինակելի նուիրաբերումով հիմնադրեցին ու քար առ քար կառուցեցին Համազգայինի Լեւոն Շանթ եւ ապա՝ Նիկոլ Աղբալեան մշակութային կեդրոնները, որոնց մէջ կեանք հաստատած կրթական կառոյցներուն ու գեղարուեստական խումբերուն ելոյթները կը վայելենք այսօր այստեղ, վաղն ամենուրէք:

Համազգայինը կեանք է ու կենսակերպ: Համազգայինը հայահաւաք կազմակերպութիւն է, այլ խօսքով՝ կազմակերպուած հաւաքականութիւն, որուն շուրջ կը հաւաքուին բոլոր անոնք, որոնք որոշած են հայօրէն ապրիլ այս կեանքը: Հայօրէն ապրիլ կը նշանակէ համախմբուիլ հայ մշակութային արժէքներուն շուրջ, սերտել եւ իւրացնել զանոնք ու անոնց մտերմութեան մէջ շարունակել ո՛չ միայն ապրիլ, այլեւ՝ ապրեցնել:

Համազգայինը առաքելութիւն է: Անոր առաքելաներն են բոլոր անոնք, որոնք կը դաւանին հայոց ազգային մշակոյթի արժէքներուն ու ջանք ու քրտինք չեն խնայեր, կազմակերպական զանազան կառոյցներու մէջ բեղուն գործունէութիւն ծաւալելու:

Համազգայինը նուիրաբերութիւն է: Անոր նուիրաբերողները գիտակից ու ձեռնհաս հայ մեծահարուստներն են, որոնք խորապէս կը գիտակցին Համազգայինի հայապահպան ու մշակութատարած առաքելութեան ու անվերապահօրէն կը վստահին անոր: Համազգայինի նուիրաբերողներները նաեւ մենք բոլորս ենք եւ մեր հաւաքական նուիրաբերութիւնը նոյնպէս մեծ դերակատար է Համազգայինի ծրագիրներու յաջողութեան մէջ:

Համազգայինը յանձնառութիւն է: Անոր յանձնառուներն են բոլոր անոնք, որոնք կը ծառանան քիչ առաջ նշուած բոլոր դժուարութիւններուն դէմ ու հիմնադիր սերունդէն իսկ կտակուած տոկուն կամքով ու հաւատքով կը շարունակեն Համազգայնականի իրենց կեանքն ու աշխառանքը:

Եւ վերջապէս, Համազգայինը երիտասարդութիւն է: Համազգայինի տարբեր երկիրներու՝ տարբեր դպրոցներու, երգչախումբերու, պարախումբերու, թատերախումբերու, նուագախումբերու թէ կերպարուեստի խումբերու մէջ հաւաքուած մեր անոնման պատանիներն ու երիտասարդները հիմքը կը կազմեն տարեց, բայց ոչ ծեր այս հոյակապ միութեան, առանց որուն մեր հաւաքական կեանքը վաղուց գունաթափուած ու հաւանօրէն նոյնիսկ ընդհատուած պիտի ըլլար:

Յանուն Համազգային Հայ Կրթական ու Մշակութային Միութեան Կեդրոնական Վարչութեան, 95-ամեակի յոբելենական անդրանիկ ձեռնակի այս բեմէն կ'ողջունեմ մեր աշխարհատարած 19 շրջաններու վարչական կառոյցներն ու համազգայնական շարքերը, Արցախէն Հայաստան, Աւստրալիայէն Ամերիկաներ ու Քանատա, Եւրոպայէն Միջին Արեւելք: Կ?ողջունեմ Համազգայինի ճեմարաններու թէ այլ հաստատութիւններու տնօրէնները, աշխատակազմերը, ուսուցիչներն ու աշակերտները, մեր գեղարուեստի խումբերու ղեկավարներն ու անդամները եւ կը մաղթեմ նոր ոգեւորութիւն ու նոր ձեռքբերումներ:

Կը շնորհաւորեմ նաեւ հայրենի թէ սփիւռքի բոլոր հայորդիները, որոնց սրտերուն ու հոգիներուն մէջ, կեանքի այս կամ այն պահուն, Համազգայինի իրագործած այս կամ այն մշակութային ձեռնարկին ճամբով լուսաւորող մոմ մը վառած ըլլայ:

Այս առիթով կը խոնարհինք բոլոր այն համազգայնականներու յիշատակին առջեւ, որոնք, խոր համոզումով ու նուիրումով համախմբուելով Համազգայինի շուրջ, անոր միջոցով շունչ տուին մեր հաւաքական գոյութեան. իմաստ ու նշանակութիւն՝ մեր կրթական ու մշակութային կեանքին:

Յաճախ կրկնուած ճշմարտութիւն է, որ ամեակները իբրեւ տարիներու ամբողջութիւն, իրենց մէջ ոչինչ ունին նոր: Անհատներն ու հաւաքականութիւններն են, որոնք նման առիթներով պիտի վերարժեւորեն անցեալը, քննեն ներկայի մարտահրաւէրները, անհրաժեշտութիւններն ու հնարաւորութիւնները եւ ուրուագծեն ապագան:

Այս ճշմարտութիւնը ամբողջապէս ցուցանիշ է նաեւ 95-ամեայ Համազգայինին համար, որպէսզի ամրանայ մեր ազգային կենսակերպը, իրականանայ մեր առաքելութիւնը, ուժական դառնայ մեր նուաստաբերումի ոգին ու գիտակցումը, վերանորոգուի մեր յանձնառութիւնը եւ առաւել երիտասարդանան մեր շարքերը:

Որպէսզի անսասան մնայ Համազգայինի առաքելատիպ հիմնադիրներու տեսլականը ու Հայը շարունակէ կարեւորութիւն ընծայել իր կրթական մակարդակին ու տէրն ու կրողը մնայ իր դարաւոր մշակոյթին»:

Հողի մշակն իրավունք չունի սոված մնալ

6 ← Մենք պետք է սկզբից միանայինք Հայաստանին, ԼՂԻՄ մարզխորհրդի որոշման համաձայն՝ Հայաստանը պետք է ընդուներ Արցախին իր կազմի մեջ: Լեւոն Տեր-Պետրոսյանը եւ իշխանությունները գտան, որ անկախության ճանապարհով պետք է հասնել վերամիավորման, որը բերեց հասցրեց մեզ այսօրվան, երբ մեր ինքնորոշման իրավունքը հարցականի տակ է դրվում, ՀՀ իշխանություններն ընդհանրապես այդ մասին չեն խոսում, մեզ տեսնում են Ադրբեջանի կազմում»,- նշել է Ալյոշա Գաբրիելյանը:

Բայց պայքարը շարունակվում է, պետք է պայքարել՝ վստահ է Ալյոշա Գաբրիելյանը: «Աշխարհը կարծես արձագանքում է, որ ինքնորոշման իրավունքը սկզբունքային նշանակություն ունի եւ պետք է հարգվի, իսկ դրա համար պետք է պայքարենք: Դա մեկ օրվա հարց չէ:

Արցախի հարցը դարերի պատմություն ունի, եւ այդ ամբողջ ընթացքում կարողացել ենք մեր ինքնությունը պահել՝ մեր մելիքների, մեր եկեղեցու, մեր հավատի շնորհիվ»,- ասել է Ա. Գաբրիելյանը:

Նրա խոսքով, այսօր, սակայն, այլ է իրավիճակը՝ ի համեմատ 88-յան տրամադրությունների: Եթե այն ժամանակ գերիշխում էր միասնությունը, նվիրվածությունը, ապա այսօր կան մարդիկ, ովքեր առաջնորդվում են սեփական շահերով՝ հաշվի չառնելով, որ այս ժողովուրդը պատերազմի ու զրկանքների միջով է անցել, որ այս հողի համար մեր լավագույն տղաներին ենք կորցրել, ընտանիքներ են դժբախտացել, զավակներ են որբացել: Նա Արամ Մանուկյանի խոսքերն է մեջբերում, որ մենակ պետք է պայքարենք ե՛ւ արտաքին, ե՛ւ ներքին ճակատներում, որովհետեւ արցախցին ամուր թելերով է կապված իր հայրենիքին, իր հողին:

«Ի՞նչն է կապում արցախցիներին այս հողին: Ինչո՞ւ ենք այսքան զրկանքների միջոց անցնում՝ հանուն այս հողի: Որովհետեւ այս հողը բարեբեր հող է, եթե չմշակենք էլ, մեր անտառները մեզ կպահեն, այսպիսի տարածք չեք գտնի ուրիշ ոչ մի տեղ: Կարծես մի օազիս լինի Արցախը՝ Աստծո շնորհի, դրա համար այս հողի համար ուժեղացել է պայքարը: Այս հողը մեզ պահել է ու պահում է: Մենք դարերով մշակել ենք այս հողն ու նրա քաղցրությունը զգացել ենք աշխատելու ընթացքում: Ես չեմ պատկերացնում, որ որեւէ տեղ կարող եմ գնալ ու ինձ հարազատ ուրիշ հող գտնել:

Չեմ պատկերացնում: Այս հողը մեզ կերակրում է, պահում է, շունչ է տալիս, հույս է ներշնչում ու խնդրում իրեն բաց չթողնել: Ովքեր էլ որ գնում են այստեղից, կարծում եք՝ ուրիշ տեղ կյա՞նք են գտնում»,- ասում է հողը գուրգուրելով հասակ առած արցախցին:

Ալյոշա Գաբրիելյանը զրույցն ավարտում է լավատեսությամբ ու հաստատ համոզմունքով, որ նոր սերնդի մեջ բազմաթիվ հայրենասեր երիտասարդներ կան, ովքեր հասկանում են հողի գինը, ովքեր պատրաստ են պայքարել հանուն այդ հողի. վկան 35-ամյա մեր պայքարում իրենց կյանքը չխնայած հայորդիներն են: «Մեր պահանջն այն է, որ մեր իշխանությունները խաղեր չխաղան, նորմալ բանակցեն ու կարմիր գծերը չհատեն, հակառակ դեպքում կարժանանան դավաճանի կոչմանն ու արժանի դատավճռին»,- եզրափակել է Ալյոշա Գաբրիելյանը:

Զրուցեց Վահագն ԽԱՉԱՏՐՅԱՆԸ

Սումգայիթում տեղի ունեցած արյունոտ բեմադրությունը ոչ այլ ինչ էր, քան նախապես ծրագրած ցեղասպանություն. Սումգայիթյան դեպքերն ականատեսի աչքերով

Սկիզբը՝ նախորդ համարում

Սիրելի՛ ընթերցող, գիտեմ՝ հաճելի չէ կարդալ եւ հասկանալ ցեղասպանություն բառի իմաստը: Սրտի ցավով եմ գրում, աչքերիս առաջ հայտնվում է այդ օրերի ողջ դաժանությունը: Քանի անգամ էի պատրաստվում նկարագրել այդ ամենը, որպեսզի մեր ազգը սերտի այս դասերը եւ ապագայում երբեք եղբայրության ձեռք չմեկնի նրանց, ովքեր մարդկության թշնամիներն են: Այդպիսի թշնամուն պետք է խեղդել սեփական բնում՝ ինչպես Բեռլինում, չնայած նրանք ֆաշիստներից ավելի դաժան գտնվեցին: Որպես հայրենական պատերազմի նախկին զինվոր՝ ես եւս մեկ անգամ զանգեցի հանրապետական զինվորական կոմիսարիատ, որտեղից ինձ պատասխանեցին. «Գիտենք, գիտենք, զինվորական զորախումբը արդեն պետք է այնտեղ լիներ»: Իսկ նրանք չկային ու չկային: Գրողը տանի Գորբաչովին: Արդեն 3 օր է՝ արյունալի պատերազմ էր ընթանում, իսկ ինքը ամբողջ աշխարհին հայտարարեց, թե ընդամենը մի քանի ժամ են ուշացել: Իսկ փրկիչները՝ պարզվեց անզեն էին, հայտնվել էին ծուղակի մեջ եւ արդեն իրենք էին օգնության կարիք զգում:

Մինչ մեր ռուս փրկիչները կժամանեին, պետք էր մի կերպ դիմանալ այս հրեշավոր իրականությանն առերեսվելով: Հարգելի՛ ընթերցող, վստահ եղիր, որ օդաչուները՝ ինչ-որ կատարվում էր, ռացիաներով փոխանցում էին իրենց ղեկավարությանը: Եվ փոխանցել են նաեւ այն, որ քաղաքի մուտքերում զինվորական շարասյան շարժին կարմիր լույս էր տրված, այն դեպքում, երբ հենց ոստիկանությունն էր արգելափակել քաղաքի մուտքերը՝ պատճառաբանելով, որ ամեն ինչ նորմալ է, փոքրիկ խուլիգանություններ են, եւ զինվորականների մուտքի անհրաժեշտություն չկա: Սա եւս մեկ անգամ ապացուցում է, որ ոստիկանությունը նույնպես հրաման ուներ ոչնչացնելու բոլոր հայերին: Եթե չլիներ ռուսների մուտքը քաղաք, գուցե հենց այդպես էլ լիներ:

Լսում եմ Զինայի հարազատ ձայնը. «Տիկի՛Ն Սեդա, ուռա՛, նրանք գալի՛ս են, գալի՛ս են ձեր փրկիչները»:

Ամբոխը ճանապարհ է բացում ավտոբուսների համար, եւ շուտով նորից շրջափակում այն: Ողջ շարասյունը հայտնվել էր շրջափակման մեջ:

«Տիկի՛Ն Սեդա, անզեն զինվորների վրա քարերով հարձակվել են: Թռչում են քարերը՝ ջարդելով ավտոբուսների ապակիները: Ավտոբուսներում գտնվող անզեն զինվորները թաքնվել են վահանների տակ եւ չգիտեն՝ ինչ ձեռնարկեն: Ես չեմ կարող ներկայացնել այն ամենը, ինչ որ տեսնում եմ իմ պատուհանից: Քիչ է մնում երկաթե մուրճերով սողոսկեն ավտոբուսի մեջ: Տիկի՛Ն Սեդա, ռուսները եկել են հայերին օգնելու, սակայն իրենք են հայտնվել դժվարին վիճակում»,- լացելով պատմում էր Զինան: Նրանց անխղճորեն հարվածում են քարերով: Օգնություն չկա. նրանք չեն փրկվի:

«Տիկի՛Ն Սեդա, ռուսներին ծեծում են, իսկ ամբոխը ցնծում է, նրանք ի վերջո մեզ էլ կհասնեն, պետք է հեռանալ»,- անհանգիստ ձայնով ասում է Զինան, ով խորապես մտահոգված էր հայերի ճակատագրով, եւ տեսնելով յուրայինների հետ կատարվողը՝ սկսում է լացել:

«Տիկի՛Ն Սեդա, իմ աչքերի առջեւ հրաշք կատարվեց: Ինչ-որ մեկը ապակու կտորներ նետեց զրահամեքենայի վարորդի աչքերին եւ նրա համբերությունն այլեւս հատվեց: Նա միացրեց զրահամեքենայի շարժիչը եւ անմիջապես անցավ մարդկանց վրայով: Նրան հետեւեցին նաեւ մյուսները: Տեսնելով գետնին ընկած 6-7 յուրայիների դիերը՝ ամբոխը զգաստացավ եւ այդպիսով ճանապարհ բացեց շարասյան համար, որոնք ուղեւորվեցին դեպի Լենինի հրապարակ»,-ասում էր Զինան:

Իրենց արյունոտ զոհերի բացակայության պատճառով հիմնական գործող անձինք ու առաջնորդները լքեցին ամբոխին: Զինան կարծում էր՝ առաջադրանքն ավարտված էր նրանց համար, սակայն վաղաժամ էր ուրախությունը: Յուրայինների արյունից առավել գազազած՝ ամբոխը ցրվել էր ավտոկայանի հարակից շենքերով, որտեղ հայեր էին բնակվում:

Մտնելով հայերի տները՝ նրանք սկզբում գումար ու ոսկի էին պահանջում՝ հայերին չվնասելու պայմանով: Կյանքը թանկ է, ո՞վ կարող էր չհամաձայնվել: Սակայն նրանք իրենց գրպանները հայերի հարստությամբ լցնելուց հետո մտնում էին դահիճի իրենց իրական կերպարի մեջ եւ կյանքի կոչում իրենց գազանաբարո արարքները: Հայկական բոլոր բնակարաններից օգնության ճիչեր էին լսվում, բռնաբարվող կանանց ու աղջիկների անհույս ճիչեր: Նրանց մերկ դուրս էին քաշում փողոց ու ծաղրուծանակի ենթարկելով՝ տանջամահ անում, ծնողների աչքի առջեւ սպանում իրենց զավակներին, նրանց մարմինները դարձնում ֆուտբոլի գնդակ:

«Տիկի՛Ն Սեդա, նրանք կրակ են վառել փողոցում ու մերկ կնոջ մազերից քաշելով՝ տանում դեպի այն», - դողում էր Զինայի ձայնը: Ես խնդրեցի Զինային այլեւս չպատմել, երբ փոքր դադարից հետո Զինան բղավեց. «Նա փրկվա՛ծ է, փրկվա՛ծ է: Տարեցները, ձեռքները վեր բարձրացնելով, իրենց Ալլահի անունով խնդրեցին խղճալ աղջկան: Դահիճները բաց թողեցին նրան ու անհետացան բակից»,- պատմում էր Զինան:

Մինչ նա պատմում էր, ես պատուհանից հետեւում էի մեր բակում կատարվող չտեսնված ու չլսված անմարդկային եղեռնագործությանը. մի խումբ ներխուժեց մեր բակ:

«Մնաս բարով, սիրելի՛ Զինա, իմ հերթն էլ եկավ»,- ասացի ես ու անջատեցի հեռախոսը՝ պատրաստվելով դիմավորել «հյուրերին»:

Լսում էի արդեն մեր շենքում նրանց կաղկանձյունն ու վայնասունը: Դողացող ձեռքերով վերցրի քլորով լի տարան ու կանգնեցի մուտքի մոտ՝ պատրաստ դիմավորելու նրանց դեմառդեմ: Օ՜, տեր աստված, ինչպիսի վայրագությամբ էին նրանք կոտրատում իմ բնակարանի դուռը: Այդ զարկերից կոտրվեց իմ բնակարանի դուռը, սակայն ետեւի ամուր արգելապատնեշը չթողեց, որ այն ընկնի, եւ նրանք առաջ գան: Ես վերապրեցի պատերազմի սարսափը, սակայն նույնիսկ պատերազմում այդպիսի մահվան սարսափ չէի զգացել ես: Ողջ մնալուս օգնեց ոչ միայն արգելապատնեշը, այլեւ նրանց առաջնորդի՝ դրսից կանչող ձայնը:

«Է՜յ, հա՜յ, դու մեր ձեռքից չես ազատվելու, մենք էլի կգանք»,-ասացին նրանք՝ վերջին անգամ հարվածելով դռանը: Հեռացան:

Շուրջ 10 րոպե անդադար զանգում էր հեռախոսը: Զինան խորապես անհանգստացած էր: Ես մի կողմ դրեցի քլորով լի թասն ու պատասխանեցի հեռախոսին:

- Տիկի՛Ն Սեդա, դուք ողջ եք,-հարցրեց Զինան:

- Եթե խոսում եմ, ուրեմն բախտ է վիճակվել ողջ մնալու,-պատասխանեցի ես ու լսեցի, թե ինչպես են նորից զարկում դուռը: Սիրտս կանգ առավ, մտածեցի՝ մի՞թե ամեն ինչ կրկնվում է:

- Սեդա՛, Սեդա՛, զինվորներն են դուռը ծեծում, ձեր փրկիչներն են եկել, բացիր դուռը,- ասում էր մեր հարեւան Ռայան: Ճիշտն ասած սկզբում չհավատացի, սակայն դռան արանքից նայելով՝ համոզվեցի՝ նրանք էին: Բացեցի դուռը, եւ նրանք ասացին, որ վերցնեմ փաստաթղթերս ու գնամ իրենց հետ. ամեն ինչ նորից կարող է կրկնվել: Այդպես ես փրկվեցի...

Շուտով հազարավոր փրկվածների հետ միասին հայտնվեցի զինվորականների թիկունքում: Այնքան հաճախ էին զինվորականներին դատապարտում ուշանալու համար, բայց մենք՝ սպանդից փրկվածներս, երախտապարտ ենք միայն նրանց: Ո՞վ, եթե ոչ նրանք փրկեցին հարյուրավոր հայերի կյանքը, վերջ տվին արյունոտ ներկայացմանն ու պատժեցին նրա մասնակիցներին: Սակայն որքա՜ն մեծ էր քաղաքի պարետի զարմանքն ու զայրույթը, երբ բանտախցերում չտեսավ իրենց կողմից ձերբակալվածներին: Ոստիկանները դատարկում էին նրանց գրպաններն ու նետում խցերը, որտեղից նրանք գաղտնի դուրս էին ելնում: Դա բացահայտելուց հետո պարետը հրամայեց աշխատանքից հեռացնել ոստիկանական ողջ անձնակազմին՝ նրանց պարտականությունները հանձնարարելով զինվորականներին: Կոտորածից փրկված հայերին զինվորները տեղավորել էին զրահապատ օղակում՝ քաղաքային զբոսայգում եւ նրան հարակից ակումբում: Հավաքվածների մեջ տեսնելով պատերազմի վետերաններին՝ հեգնանքով հարցրի.

- Դե ի՞նչ, պատերազմի՛ զինվորներ, շրջափակմա՞ն եք ենթարկվել, հայտնվել դարանո՞ւմ...»:

Մենք որոշեցինք դիմել պարետին՝ քաղաքից դուրս գալու խնդրանքով, բայց նա լսել անգամ չկամեցավ՝ ասելով, թե դա մեծ համարձակություն է եւ կարող է լավ ավարտ չունենալ: Մենք պնդեցինք, եւ ի վերջո զինվորականների ուղեկցությամբ առաջին մարդատարը ճամփա ընկավ: Ազերիները չէին սպասում նման քայլի: Նրանք անակնկալի եկան, սկսեցին գոռգոռալ, բայց արդեն ուշ էր:

Եվ ամենազարմանալին ինձ համար այն էր, որ Բաքվում կյանքն ընթանում էր առաջվա պես: Կարծես ոչինչ էլ չէր եղել: Ոչ ոք տեղյակ չէր Սումգայիթում կատարվածի մասին: Մինչդեռ վտանգը դեռեւս առկա էր, եւ պետք էր տագնապի զանգ հնչեցնել: Առաջին իսկ գնացքով մեկնեցի Կրասնոդար: Քաղաքային զինկոմիսարը 20 րոպե լսեց իմ պատմածները՝ որպե առ որպե սարսափելով լսածներից ու մերթ ընդ մերթ կրկնելով՝ «ԽՍՀՄ-ում այդպիսի՞ն...անհնարին է, անհավատալի»:

Այո՛, դա չլսված բան էր, սակայն՝ ճշմարտություն: Խնդրեցի օգնել հայերին, դիմել ուր որ պետք է. այլապես ես պետք է մեկնեի Մոսկվա: Նա ինձ խորհուրդ տվեց վերադառնալ ետ՝ խոստանալով պարզել ինչն ինչոց է:

Վստահելով նրան՝ ետ վերադարձա: Հասնելով Բաքու՝ հանդիպեցի զարմիկիս, որը զինվորական էր՝ գեներալ-մայորի կոչումով: Նա անտեղյակ էր Սումգայիթում կատարվածից եւ պատմածներիս չհավատաց՝ ասելով, թե դա անհնարին է, հավանաբար ծեծկռտուք է եղել. իսկ ես չափազանցնում եմ: Ես ասացի, որ հասարակ ծեծկռտուքի համար չէի հասնի Կրասնոդար կամ կեսգիշերին անհանգստացնեի իրեն: Իսկ եթե ինքը տեղյակ չէ կատարվածից, դա միայն այն պատճառով, որ հայ է եւ անպայման պետք է որեւէ միջոց ձեռնարկեր արյունահեղությանը վերջ տալու համար, չէ՞ որ «փոքր» մարդ չէ, եւ խոսքը գին կունենա: Եթե որեւէ մեկը կասկածում է խոսքերիս ճշմարտացիությանը վերոհիշյալի մասին, կարող է հարցում անել Կրասնոդարի քաղաքային զինկոմիսարիատ՝ 1988 թ. զինկոմիսարին: Իսկ իմ զարմիկը՝ գեներալ մայոր Թոռնիկ Ոսկանյանը, բնակվում է Մոսկվայում: Հետագայում ես իմացա, որ Բաքվի ոստիկանությունը եւս տեղյակ էր կատարվածից ու սումգայիթցի հայերի զանգերին չեն պատասխանել, իսկ Բաքվում ապրող իրենց հարազատների զանգերին ի պատասխան ասել են, թե Սումգայիթում ոչինչ էլ չի կատարվում, մի խումբ կարգազանցներ ստիպում են հայերին զանգել եւ նման բաներ ասել՝ աշխատելով ազգամիջյան թշնամանք հրահրել: Եվ որն էր սումգայիթյան իրադարձությունների ծրագրում նրանց բաց թողնված սխալը. նրանք մոռացել էին անջատել միջքաղաքային հեռախոսակապը: Այն անջատվեց միայն զինվորականների գալուց հետո, իսկ մինչ այդ մարդիկ, այնուամենայնիվ, կարողացել էին ինչ-որ կերպ օգնություն խնդրել դրսից: Այլապես ինչպե՞ս կարող էին այդ մասին իմանալ զինվորականներն ու օգնության գալ: Իսկ օգնություն խնդրելու ամենահարկան հնարավորություն ուներ Սումգայիթի զինվորական կոմիսարը, որը նույպես հայ էր: Նրա խոսքին չհավատալ, կարծում եմ, չէին կարող:

Բաքվից զանգեցի Սումգայիթ: Հարեւաններս ասացին, թե քաղաքում վիճակը բարելավվել է դեսանտայինների եւ Մոսկվայից հետաքննիչների ժամանումով, սակայն լարվածություն դեռեւս կար, եւ ժողովուրդը պահանջում էր ազատ արձակել իր «հերոսներին», եւ դեպքերը գրեթե նորից ողբերգական ընթացք պետք է ստանային, մանավանդ քաղաքի մատույցներում տեղադրված «Սումգայիթը ԽՍՀՄ ժողովուրդների բարեկամության կենդանի մարմնավորումն է» կարգախոսը հանելու պատճառով: Այն պետք է հանվեր պարետի հրամանով, որովհետեւ, նրա խոսքերով, Սումգայիթն արդեն սրբապղծել էր բարձր գաղափարը...

Ամեն ինչ վերհիշել ու պատմել անհնարին է, սակայն սա համառոտ մի շարադրանք է Սումգայիթում կատարված ողբերգության մասին: Այն չպետք է մոռացվի: Յուրաքանչյուր ոք պետք է հիշի ու խոնարհվի անմեղ նահատակների հիշատակի առջեւ: Թերեւս մենք մխիթարված ենք. Արցախի քաջորդիները լուծեցին նաեւ սումգայիթյան եղեռնի զոհերի վրեժը՝ թշնամուն տալով արժանի հակահարված ու խեղդելով իր իսկ որջում: Փառք ու պատիվ կենդանի եւ նահատակ հերոսներին»,- գրել է Սեդա Առաքելյանը:

Հուշերը գրի առավ
Վահագն ԽՄՉԱՏՐՅԱՆԸ

Հայտարարություն

Կորել է Ավետիք Հովիկի Ավանեսյանի՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Ավետարանոցի միջնակարգ դպրոցի կողմից 2015թ. տրված ատեստատը:

Համարել անվավեր:

«Ապառաժ» երկշաբաթաթերթ
Ստեփանակերտ, Կնունյանցների 17,
հեռ. +374 97 38 43, E-mail: aparajtert@gmail.com
Կայքէջ՝ www.aparaj.am

Նյութերի համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նաեւ նյութեր, որոնցում արծարծված տեսակետները չի կիսում:
Տպագրվում է Ստեփանակերտի «ԴԻԶԱԿ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ում:
Գրանցման վկայական՝ 04: Տպաքանակը՝ 700: Գինը՝ 100 դրամ:

Խմբագիր
Ա. Պուլուզյան